



Blog H's Post



Blog H

December 7, 2024 · 🌐



. Արեւմուտքին դեմ գլուխ բռնած, ամենավերջին արաբական երկիրը, Սուրիան, ոչնչացաւ:

. Իրանն ալ, արուեստական շնչառութեամբ կը գոյատեւէ միայն: Դեռ քիչ մը եւս...

. Պաղեստինն ալ կը մնայ միայն՝ երազանք:

Այդ անունով ձեւական բան մը կը սարքեն հաւանաբար:

Որ ինքնին, իր ձեւակերպական գոյութեամբը իսկ, դաժան ծաղրանք մը, տեւական նախատինք մը կը հանդիսանայ, ի դեմ՝ իսկական Պաղեստինի տեսլականին, գաղափարին:

Բաց ու խորունկ վերք մը՝ այդ Գաղափարի նուիրեալներուն հոգիին մէջ, ուր դանակով շերտեցին, եղունգներով դուրս բռցուցին եւ շունչերուն նետեցին՝ Պաղեստինեան Հարցը:

Ինչպէս որ Հայաստան անունով այդ տեղը:

. Այդ մնացորդիկ «Հայ»աստանն ալ դեռ պատռտող, ճեղքող՝ թրքական, թրքապատկան միջանցքը, ստոյգ իրականութիւն մըն է:

Այդ ալ, it's a done deal:

. Անձնական միմիակ միսիթարութիւնս՝ Լիբանանի այժմ խոստումնալից դարձած ապագան է:

Մ. Հայրուկ Շամլեան

See Translation



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 9, 2024 · 🌐



. Բարձր է հաւանականութիւնը որ Իրանի ալ խնդիրը կը լուծէ ԱՄՆ-Իսրայէլ ռազմա-քաղաքական սերտ դաշինքը, Թրամփի նախագահութեան պաշտօնական սկզբնական տեղեկատուութեամբ: 25 Յունուարէն առաջ:

. Իսկ Փութինին հետ այդ «առեւտուրի» տեսութիւնը, որ այս ամէնուն դիմաց – իր կողմէ Սուրիոյ եւ Իրանի յանձնումով -, իրեն բաներ մը պիտի շնորհեն այլուր, այդքան ալ անփոփոխ բան մը չէ...

Այդ ալ, հաւանականութիւններու հիման վրայ ուրուագծուող տեսութիւն մըն է: Եւ նոյնիսկ եթէ այդպիսի գաղտնի համաձայնութիւն մը կայ, ապա, it's not written in stone...

Եթէ Փութինը սխալը ընէ՝ սխալ հասկնալու, չափելու Թրամփին մտածողութիւնն ու տրամադրութիւնները, ապա կրնայ լուրջ պատի մը զարնուիլ, իր վերջին ու մնացորդ ծրագիրներուն մէջ:

. Յատկապէս Ուքրանիոյ պարագային, Ռուսաստանը այն աստիճան տկարացած է հիմա, մինչ ուքրանացիները այնքան արտասովոր կերպով կը շարունակեն դիմանալ ու դիմադրել, որ, նոյնիսկ երբ որ ԱՄՆ-ն նուազեցնէ իր ռազմական օգնութիւնը, եւրոպական պետութիւններու օգնութիւնը կրնայ բաւարար ըլլալ որ Փութինը տակաւին ծանր հարուածներ ստանայ, իր այդ - արդէն իսկ լայնօրէն ձախողած - ներխուժումին վերջին հանգրուաններուն:

. Հետեւաբար, Փաշինյանին հաշիւը, սխալ չէ...

Որ՝ ՌԴի տկարացումով, բազմաթիւ նշանակալից պարտութիւններով աշխարհի տարածքին, ՀՀ-ն կրնայ իսկապէս ազատագրուիլ ռուսական լուծէն:

. Այո, Հայոց Աւանդական Սփիւռքի ազգայնական հայերուս համար, գէշ լուրը այն է որ, այդ պարագային, ՀՀ-ն պիտի իյնայ Թուրքիոյ գիրկը:

Բայց եթէ հայաստանցի մըն ես, մի քանի սերունդներէ ի վեր՝ Անդրկովկասի հայ մըն ես, հասկնալի է որ նախընտրես՝ Թուրքիոյ մօտենալ, կարենալ ազատելու համար Ռուսաստանէն: Երկու չարեաց փոքրագոյնը տրամաբանութեամբ...

Մանաւանդ երբ որ այլեւս հակաթուրք «ուժերը» այսքան խղճալի, ողորմելի, խայտառակ եւ ամօթալի վիճակի մը մատնուած են, ՀՀի մէջ:

Սկսեալ անոնցմէ, որոնք՝ «բայց զենքը ձեռքիին, ոտքի՝ կանգնեցան...» կ'երգեցնեն իրենց պատանիներուն:

Մ. Հայրուկ Շամլեան

[See Translation](#)



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post



Blog H

December 15, 2024 · 🌐

«Անդրշիրիմեան զրոյց աննման ԼԵՆՈՆԻՆ եւ իր մահակիցներուն հետ»
-- Սերժ Վարդգէս Շամլեան, «Ուխտագնացութիւն դէպի Պերլին», 1991, էջ 43-55`
https://haytougchamlan.home.blog/.../baba-kirk-3_-pages...

* * *

[գիրքէն անշատ, յաւելեալ նկարներ՝ մեկնաբանութիւններուն մէջ]

..

See Translation



2 comments



Like



Comment



Share

All comments



Author

Blog H

ԼԵՆՈՆ ՊԵՐԱԿԵՐԵԱՆ, ՎԱՐԴԳԵՍ ՇԱՄԼԵԱՆ, ՍԵՆՈ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (70+ տարիներ առաջ...)



7w

Like

Reply

See translation



Author

Blog H

իրենց կիներուն կողքին պազած՝ հարազատ ընկերներ, ԼԵՆՈՆ ԱՄՄՈՆ եւ ՊԱՅԱՍ



7w

Like

Reply

See translation



Write a comment...



Blog H's Post

×

Սկզբնաղբը, սր քասր օր վը սսայոսք Երեւան, Երեւոյ ԵրթալԷ առաջ: Ի րպէսզր Հայաստանս ալ այցելենք, Հայաստանին ծանօթանանք: (Աստիճանաբար սակայն, այդ մի քանի օրերը դարձան արդէն հազիւ մէկ գիշեր... Եթէ էն վախտ օդակայան ըլլար Արցախի մէջ, այլեւս ուղղակի այդտեղ պիտի իջնէինք այլեւս...)

* * *

Ուրեմն օր մըն ալ, Երեւանէն քիչ անդին տեղ մըն էինք, հաճելի պահ մըն էր, եւ վերոյիշեալ անձը որոշեց ինծի... օգնել:

Եւ սկսաւ բացատրել որ, պէտք է ես հողեր գնեմ Հայաստանի մէջ: Հողային լայն տարածքներ:

Բայց ոչ թէ գիւղատնտեսական ծրագիրներու համար, չէ:

Այլ, որպէսզի այդ հողերուն վրայ՝ տուներ կառուցեմ:

[Լուսաբանական նօթ ընթերցողին՝ իր ըսած այդ տուներուն գինը կրնային վճարել միայն Հայաստանի հաստավիզ – կամ վաքշե անվիզ – օլիկարքները, եւ որոշ տեսակի սփիւռքահայեր:]

* * *

Քաղաքավար կերպով հասկցուցի որ հետաքրքրուած չեմ:

Մարդը, խաթրի առաւ... որ կ'անտեսեմ կոր իր հոյակապ խորհուրդները:

Թերեւս նաեւ նիւթի առարկայ այդ առուծախին մէջ, ինք քօմիսիօն մըն ալ պիտի գրպաներ... վերջապէս, գործի մարդ էր... ապուշ չէր... business is business !

Ուրեմն, որպէսզի ինծի համոզէ, աւելի գրաւիչ դարձուց առաջարկը, հետեւեալ բացատրութեամբ [մէջբերումը տառացի չէ, սակայն ըստ Էուրթեան, 100% իր ըսածն էր] ` «հիմա չէ որ պիտի չգնես գիւղացիներուն այդ հողերը, չէ՛... հիմա ամառ է... փորերնին կուշտ կ'ըլլալ, հողը բերք կ'ունենայ, եւ ուրեմն գիները բարձր կ'ըլլան... պիտի գաս՝ ձմեռը... ձմեռուան մէջտեղները... Երբ որ ամէն տեղ ձիւն է, հողերը սառած են, անգործածելի են, եւ անոնց սեփականատէր գիւղացիները իրենց մէկդի դրած դրամները ծախսած են, մինչ այդ ժամանակաշրջանին եկամուտ չունին, աղքատ եւ անօթի վիճակի մէջ կ'ըլլան, եւ ուրեմն տրամադրուած կ'ըլլան չնչին գինով մը իրենց հողերը քեզի տալու... Նոյնիսկ, երախտագիտութեամբ, որ իրենց կ'օգնես կոր... յետոյ կը վերադառնաս շինարարական եղանակին, եւ կը սկսիս այդ աննշան գինով ձեռք բերած հողերուդ վրայ, սիրուն ու թանկ տուներ կառուցել»:

Նորէն մերժեցի, քաղաքավար կերպով, առանց որեւէ բան ըսելու...

* * *

Երբ որ տեսաւ որ ինձմէ խէյր չկայ, ուրեմն սկսաւ ուրիշ բաներու մասին խօսիլ, Հայաստանի կապակցութեամբ: Հազիւ որ ես կը ժպրիէի կարծիք մը յայտնել, հեզնական երես մը կ'առնէր, եւ կ'ըսէր ինծի որ՝ «հա ինչ, հիմա... տարին մէկ ամիս այստեղ կու գաս կոր ըսելով, եա'անի բան մը հասկցաղծ ես Հայաստանէն: »

Այդ մէկն ալ, կլլեցի...

* * *

Սակայն խօսակցութիւնը տեղ մը հասաւ ուր, չեմ յիշեր ճիշդ. «վիճաբանութեան» որմէկ կէտին կապակցութեամբ, երբ մէկէն մարդը՝ բարկացաւ... Եւ կարմրած երեսով, կտրուկ կերպով, ինծի ըսաւ՝ «շա՛տ սխալ է, այս ըսածներդ... այս ժողովուրդը՝ կեղեքուա՛ծ է, աղքատութեան ենթարկուած է մեծահարուստներուն կողմէ... այս ժողովուրդին պէտք է՝ յեղափոխութիւն, յեղափոխութիւն... Եւ մենք պէտք է որ այդ յեղափոխութիւնը կազմակերպենք, ղեկավարենք, որպէսզի փրկենք այս խեղճ, շահագործուած, կեղեքուած, ժողովուրդը...»

Այստեղ այլեւս իրեն դիտել տուի որ, իր այս ըսածը, շատ «չի բռներ կոր» կէս ժամ առաջ իր ըսածներուն հետ՝ գիւղացիներու միակ ունեցուածքն ու եկամուտի աղբիւրը, իրենց հողերը, աժան գինով ձեռքբերնէն խլելու մասին - ի հեճուկս ոչ միայն իրենց ընտանիքներուն, այլ նաեւ երկրի գիւղատնտեսութեան -, անոնց վրայ կառուցելու համար հարուստներու շքեղ բնակարաններ...»:

Ուսլլա, մի քանի վայրկեան դրաւ, հասկնալու համար մատնանշուած այդ հակասութիւնը...

Յետոյ վերջապէս լռեց, եւ խնդալով, հեռացաւ ինձմէ:

Կարծեմ վերջին անգամն էր որ իր հետը շփում ունեցայ:

* * *

Բայց երանի թէ միայն այս մէկ անձը ըլլար, որ այդպէս էր:

Օրինակ մըն է միայն, ասիկա: Եւ դեռ այս անձը, համեմատաբար՝ լաւերէն է, խորքին մէջ գէշ շէկը չէ, տուեալ դասակարգին մէջ: Իրմէ շա՛տ աւելի վատերը կան: Որոնք, մնացեալներուս տեսաբար հայրենասիրութեան դասեր կու տային:

Եասու, «հայրենադարձներ» !

Դուխո՛ւ վ հայրենադարձներ...

Մ. Հայդուկ Շամլեան

See Translation

Like

Comment

Write a comment...





Blog H's Post



ղեկավարները, միևնույն իսկ Ցեղասպանութենէն ետք, փորձեցին լեզու գտնել՝ Թուրքիոյ հետ, ջանալ փրկուելու համար Ռուսաստանէն:

Իսկ այս ամէնուն դրական հետեւանքը այն է որ, վերջապէս, լիովին, ամբողջական յարգն ու արժէքը գիտցայ՝ Արեւմուտքին: Որմէ ներողութիւն կը խնդրեմ, անցեալի երկարատեւ ապերախտութեանս համար:

Հայրուկ Շամլեան

Յ.Գ. Առաջին քովեթ՝ թէ ինչ էր նախապէս դիրքորոշումս այս նիւթին մէջ: Ի սէր Արցախին եւ Հայաստանին:

Յ.Գ.2 Աւելի յստակացնեմ՝

. Թուրքերուն ինչ ըլլալը, լաւ գիտէի, միշտ լաւ գիտցած ու հասկցած եմ:

Սակայն չէի գիտեր որ այսպէս են, Ռուսաստանը եւ ռուսերը:

. Արցախի կորուստին հիմնական, ամենաառաջին պատճառը այն է, որ Հայաստանի եւ Արցախի նախկին ղեկավարները այդ տարածքներուն ճակատագիրը բացարձակապէս յանձնած ու վստահած էին՝ Ռուսաստանին:

. Ընդգծեմ նաեւ որ, 1990-ականներուն, մեր նախնական յաղթանակն ալ – որ արդէն Ռուսաստանի կամքին դէմ էր – չկարողացանք վերջնականապէս ապահովել, ամրապնդել, Ռուսաստանի պատճառով:

. Փաշինյանը շատ ձեռնտու է, Ռուսաստանին համար:

Եթէ նոյնիսկ Ռուսաստանը չէ որ զինք մեջտեղ բերաւ, լրիւ ի օգուտ Ռուսաստանին դարձան անոր բոլոր ըսածներն ու ըրածները:

Նաեւ շատ հաւանական է որ Սարգսյանը ուզեց մնալ վարչապետ, ապա երկիրը այդպէս յանձնեց՝ Փաշինյանին, յուսալով որ այդ կերպով, Հայրութիւնը կը փրկէ Ռուսաստանի ծրագիրներէն:

See Translation



1 comment



Like



Comment

Most relevant



Author

Blog H

. « Ռուսաստանը եւ Մենք »՝

<https://haytougchamlian.blog/ռուսաստանը-եւ-մենք-տարրական-բացատրու/>

. «Արեւմտեան Սփիւռքը՝ ծայրագոյն վտանգ, Հայաստանին համար»


<https://haytougchamlian.home.blog/արեւմտեան-սփիւռքը-ծայրագոյն-վտանգ-հ/>

3w Like Reply See translation



Write a comment...







Blog H's Post



Blog H

December 10, 2024 · 🌐



Ամենավերջին պահուն Արցախէն տեղահանուած հայերը եթէ իսկապէս կը սիրէիք, մարդասիրական, հարազատ սիրով կը սիրէիք - եւ ոչ թէ տեսական, գաղափարաբանական յուզումներով -, եթէ մարդկային գետնի վրայ կ'ուզէիք իրենց մնացորդ կեանքը մարդավարի բանի մը նմանցնել, ապա պէտք է որ գոնէ անոնց պարագային, գործնական ջանքեր կատարէինք (private sponsorship immigration programs, refugee status procedures...)՝ որ ամենայն օրինականութեամբ, անոնցմէ ան որ ուզէ, կարենայ տեղափոխուիլ արեւմտեան երկիր մը, օրինական կանոնաւոր ապաստան ստանալ այդտեղ:

Ինչպէս որ կատարուեցաւ, չէ՞, Սուրիոյ հայերու պարագային...

Լիբանահայերս ալ, անցեալին, շատ օգտուեցանք նոյնաման ծրագիրներէ:

Մ. Զայրուկ Շամլեան

Յ.Գ. Զա՛, հա... Արցախը օր մը դարձեալ ազատագրելու ձգտումով, շարունակենք այդ հագիւ վերապրած մոլեհաճիրները, իրենց կրած այդքան տառապանքներէ ետք, պահել՝ կոկոնացի մէջ:

(Ի դէպ, խօսքը՝ 10 Նոյեմբեր 2020էն ետք Արցախէն դուրս եկածներուն մասին է, միայն: Միւսները արդէն, շատո՛նց լքած էին իրենց պապենական տուներն ու հողերը...)

[See Translation](#)



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 22, 2024 · 🌐



Անեղիկայի եւ Ռուսաստանի միջեւ ուղղակի ռազմական բախումի մը պարագային, եթէ հիւլէական զինամթերջ չգործածուի, Ռուսաստանը կը պարտուի: Հատ արագօրէն:

Անոր փաստը, ուղղակի հաստատուած է արդէն:

ԱՄՆ-ի զէնքերով, բայց միայն ուզրանացի կոտորիներով, Ռւքրանիան այսքան ժամանակ կը դիմարդէ կրո՞ ՌՂ-ին:

Պատկերացնէ՞ք թէ ի՞նչ կը պատահի, երբ որ զինամթերքն ալ ԱՄՆ-ինը ըլլայ, զինուորներն ալ՝ ամերիկացիներ:

Արցախի եւ Ռւքրանիոյ պատերազմները, ապա Սուդիոյ մէջ տեղի ունեցածը, հաստատեցին որ ՌՂ-ի կարծեցեալ ռազմական ուժը, պակճ մըն էր: Եւ Փութինը՝ շարքաթան մը:

Կը մնայ միայն հիւլէական ռուկներու հարցականը:

Չորս խնդիր է, միայն եթէ Պուդինը տրամադիր է բառացիօրէն ինքնաապան ըլլալու, միլիոնաւոր ռուսներ ալ իր հետ տաներով...

Երբ որ poker կը խաղալիքը ընկերներով, մեկը կար որ, երբ դէժ գինաց կը մնադ մէկ ուղիշ խաղացորդի մը հետ, եւ պակճի կապկածներ կան, all-in վերջին գրաւը մէջտեղ դնէ՞ք ետք, դիմացիկին կ'ըսէր՝ «ցուցուր, կեռ...»:

Ուրեմն, եսլլա՛ւ Լալիքը, Փութին...

Յուցուր Լալիքը, դեռ իբրեւ, թէ ինչ խաղաթուղթ ունիս՝ ձեռքդ:

Ի դեպ, ընտ, վատահ բան չէ որ ԱՄՆ, Լոր Լաիազանի «թող» պիտի ըլլայ Փութինի Լկատմամբ:

Երկուր ժամանակ յարտե՞ք՝ ետք որ պէտք է Լուսազնեյնէ ամերիկեան օգնութիւնը՝ Ռւքրանիոյ, Թրանսիլը ակած է արդէն տարրերը Լշաններ արծանէր:

Չիմա, իր ըսածներէն մեկը այն է որ՝ որքան որ պէտք է, Լրեւմուտքը ռազմական օգնութիւն պէտք է որ շարունակէ՝ հայրաթիւը Ռւքրանիոյ, սակայն այսուհետեւ, այդ օգնութեան մէջ աւելի լայն բաժին մը պէտք է որ ապահովեն եւրոպական պետութիւնները: Բեռը մնա՛ չկրէ, ԱՄՆ-ն:

Որեւէ պարագայի, ինչ որ ալ հանդիսանայ յսկզունը ՌՂ-ի ներկուժումին՝ Ռւքրանիա, Փութինը այստեղ պիտի չստանայ ինչ որ ծրագրած էր, ինչ որ կը ցանկանար: Մինչ այստեղ խորտակուեցաւ, ՌՂ-ի superpower ըլլալու պատրանքը, սուտը:

Եւ աշխարիդ այսուհետեւ, միայն յարցանք եւ, Լոյկիսկ իհացմունք պիտի ունենայ ուքրանացիներուն Լկատմամբ:

Մ. Չայրուկ Համբան

See Translation

5 comments



All comments



John Baljian

Փութինը Լ, Թրանսիլ Լոյկ Լոս ի հարուստներու, անդամ են չեմ զարմանար եթէ օրթախ ալ են: Իհլեանկանը անկարելի է օգտագործուի: Իսկ Ռւքրանիայի հարցը լուծած են արդեւ: Մոյկէ ետք business as usual

6w Like Reply See translation



Author

John Baljian Թրանսիլ, չորս տարի ետք, կը դարդի ԱՄՆ, Լաիազան ըլլաւ: Եւ մինչ այդ իսկ, ուզէ՛ չուզէ՛, պէտք է որ տեսարար բանակցի ԱՄՆ, ԱՄեաթին հետ - եւ Լոյկիսկ House of Repին հետ, ուր շատ փոքրիկ է իր կուսակցութեան մեծամասնութիւնը, այնցեալ շարքաթ արդէն, ասուք բոլորը սկսան իրարու հետ կողուրիլ... Այսինքն, թէ՛ տարողութեամբ եւ թէ՛ տեսողութեամբ, Թրանսիլի իշխանութիւնը կարելի չէ բարդատնը այդ միւս հայկանին հետ, կարելի է միայն յրապ եւ մտքով որ ռուսերը իրեւ զօրով կը ձերքազատուին, սակայն շատ քիչ են այդ շանները...

Իսկ երկու, տարիէն, երկու տարի միայն, House of Representativesի Լոր ըստողութիւններ տեղի պիտի ունենան: Ըրդ Թրանսիլը կրնայ այստեղ իր փոքրիկ մեծամասնութիւնը անգամ կորսնցնել... եւ ուրեմն ընդամենը ունեցած կ'ըլլայ երկու տարի, MAGA ինքաիտութիւնը անաշ տանելու, համար...

այս է ժողովրդավարութեան առաւելութիւնը, ընկերս... ռեւէ՛ քաղաքացի երրեք - իսա մղն ա՛նկնու, բանտարկուած չէ երկարատե՛ւ, իրականութեան մը մէջ, որ իրեն համար անհանդուրժելի է... քիչ մը հաւերելութիւն, եւ արդեն ասին բան կրնայ դարձեալ փոխուիլ

6w Like Reply See translation Edited



Stepan Kazar

Miyayn ukranatys gervogh nerov havadale nedz miyamedoutioun e gam al hotvadzet shekegharsenelou tsangoutioun

6w Like Reply



Author

Blog H

Stepan Kazar եթէ, Լշանակայից չալիով, ոչ-ուքրանացիներ մասնակցէին այդ պատերազմին, Ռուսաստանը եւ, Լուսն, ուղիշ երկիրներ վատահասար մասնակցած կ'ըլլային այդ, եւ, այդ տեղեկութիւնը Լաւա, կը յայտնուէր այն երկիրներուն մէջ, ուրտեղէն զացած կ'ըլլային այդ կարծեցեալ զինուոր... See more

6w Like Reply See translation



Stepan Kazar

Blog H miss informatioun ounis gam ches tsanganar ounenal shad pasdevadz informatiouner gan mabavabt ankiyagan oujerou hesdag maisnagtsoutyan

6w Like Reply



Write a comment...



Blog H's Post

×

Blog H

November 8, 2024 · 🌐

...

ԱՄՆի անձայրաճիր տարածքներուն տակը գտնուող՝ քարիւղի պահեստները, այնքան շատ են, որ եթէ զանոնք արտադրէ այդ երկիրը, ոչ միայն՝ լրիւ ինքնաբաւ կը դառնայ այդ ուղղութեամբ, այլ կրնայ նաեւ քարիւղ հայթայթել այլ երկիրներու:

Սակայն, բնապահպանական նկատողութիւններով, այդ պահեստները կը մնան հողին տակ: Ի շահ բնապահպանութեան որեւէ կարելորութիւն չտուող երկիրներուն՝ արաբիստան, Իրան, Ռուսաստան...

Այս պատճառով որ, թէ՛ ԱՄՆ-ն եւ թէ՛ այն արեւմտեան երկիրները որոնց ԱՄՆ-ն կրնայ քարիւղ հայթայթել, այս կենսական նիւթին մէջ, կը մնան կախեալ՝ Իրանէն, Ռուսաստանէն, արաբական երկիրներէն:

Տօնալտ Թրամբը, իր նախորդ նախագահութեան ժամանակ, վերացուց՝ ԱՄՆի քարիւղի արտադրութեան վերաբերող սահմանափակումները:

Եւ այդ ժամանակ, շատ արագօրէն, ԱՄՆ-ն դարձաւ՝ լրիւ ինքնաբաւ, իր քարիւղի կարիքներուն համար: Յաջորդ քայլը, այդ քարիւղը՝ Եւրոպային հասցնելը, պիտի ըլլար:

Պայտընը սակայն դարձեալ հաստատեց՝ ԱՄՆի քարիւղի արտադրութեան վերաբերող արգելքները:

Այս էր այն հիմնական պատճառներէն մէկը, որ Պայտընի վարչակարգը ճնշում բանեցուց Իսրայէլի վրայ, որ ան չփճացնէ Իրանի քարիւղի հանքերն ու սարքերը:

Որովհետեւ այլապէս, ԱՄՆի մէջ վառելանիւթի գիները, որոնք արդէն շատ բարձրացած են, պիտի դառնային աղէտալի:

Մօտ օրէն, ինչպէս որ նախապէս կատարած էր, Թրամփը դարձեալ ազատ ընթացք պիտի տայ՝ ԱՄՆի քարիւղի պահեստներու արտադրութեան:

Եւ ուրեմն մօտ օրէն՝ երբ որ Իսրայէլը դարձեալ ռմբակոծէ Իրանը, այդ երկրին քարիւղի արտադրութիւնը պիտի խորտակուի:

Ասիկա դեռ, միայն քարիւղի նիւթին կապակցութեամբ...

Մ. Հայդուկ Շամլեան

Յ.Գ. ԱՄՆի քարիւղի արտադրութեան վերաբերեալ Թրամփի վերոնշեալ որոշումը - որ արդէն յայտնուած բան է - , ծանր հարուած մըն է նաեւ՝ Ռուսաստանին:

Քանի որ Եւրոպական պետութիւնները քաղաքականութիւնը՝ Ռուսաստանի դեմ, սահմանափակուած են անոնց կախուածութեամբ՝ անոր քարիւղէն:

Երբ որ, շնորհիւ Թրամփին, ԱՄՆ-ն սկսի հայթայթել Եւրոպային անհրաժեշտ քարիւղը, Փութինն ալ պիտի սկսի լրջօրէն մտածել թէ ինչպէս իր իշխանութիւնը պիտի կարողանայ փրկել...

Յ.Գ.2 Այս նիւթը կը վերաբերի նաեւ Չինաստանին, որ թէկուզ ոչ արաբիստանի, Իրանի եւ ՌԴի չափ, սակայն ան ալ քարիւղ ունի եւ զայն կրնայ արտադրել:

Այս պարգային ալ, Թրամփի նախագահութիւնը լաւ լուր մըն է, Թայուանի համար: Չորս Չինաստանը նպատակ ունի բռնագրաւելու:

See Translation

1 share

Like

Comment

Share

Write a comment...



Blog H's Post



Blog H

November 6, 2024 · 🌐



Այդ «wokeism» կոչումը՝ ուղեղային հիւանդության համազօր, գաղափարաբանութիւնը վարդապետութեան դարձուցած, քաղաքական եւ ընկերային մոլեռանդ հոսանքներուն որպէս հակազդեցութիւն, երկար ժամանակ, մտահոգ էի՝ արու երեխաներու, պատանիներու եւ երիտասարդներու վիճակով:

* * *

Նշեալ խելագարութեան այդ վտանգը, տարրական իսկ տղամարդկութիւնը՝ տղամարդուն մէջ մեռցնելու միտող այդ ընթացքը, հիմա մեղմացած է:

Այսինքն, կարողացանք մեր մանչերը փրկել իրենց սեռային ինքնութեան անէացումէն: Ո՛ւ՛ֆ:

* * *

Այժմ սակայն, լոջօրէն մտահոգ եմ՝ իգական սեռի երեխաներով, պատանիներով եւ երիտասարդներով:

Արդարեւ, նախորդող սերունդներու կիներու մոլորեալ հատուած մը, իրենց՝ հոգեկան castrationի ենթարկած, կնիկացուցած, եղունգներով տաշախազրկած, «տղամարդ»ոց զգուելի մեղսակցութեամբ, մեր աղջնակներուն, օրիորդներուն եւ երիտասարդ կիներուն մէջ մտցուցած են՝ Սարսափ մը: Terreurի մէջ բանտարկած են անոնց միտքերը, զգացումները, ներսիդին, իրենց ներկային եւ մանաւանդ ապագայի նկատմամբ պատկերացումները:

Որ՝ անոնք բոլորը ծանրագոյն վտանգներու տակ են: Շատ գէշ վիճակի մէջ են, շատ գէշ է ամէն բան, եւ դեռ երթալէն աւելի գէշ պիտի ըլլայ:

Քանզի տղամարդիկը, իրենց չար ու անողոք, զարհուրելի թշնամիներն են: Որոնք կ'ուզեն զիրենք վայրագօրէն զրկել իրենց ազատութենէն, կնոջական իրաւունքներէն, եւայլն.

Ասիկա, խորապէս վատառողջ կացութիւն մըն է...

* * *

Ինչպէս որ չափահաս տղամարդիկս կարողացանք մեր մանչերը փրկել, հիմա այլեւս ժամանակը եկած է որ խելքի գլխին կիները՝ իգական սեռի այն նոր սերունդներուն մէջէն դուրս հանեն այդ Սարսափը: Հանգստացնեն զիրենք: Իրենց բացատրեն որ իրենց դէմ՝ պատերազմ չկայ, եւ ուրեմն կրնան իրենց կեանքերը վայելել, առանց աւելորդ եւ ծայրայեղ վախերու:

Մ. Հայրուկ Շամլեան

Յ.Գ. Վերելի լման գրառումս կը վերաբերի միայն արեւմտեան աշխարհին: Մնացեալ աշխարհի շատ մը երկիրներուն մէջ, դժբախտաբար, իգական սեռի անձերը կարիքը ունին յատուկ պաշտպանութեան:

Սակայն վերել մատնանշածս, այդ Սարսափը, շատ տարածուած է՝ Արեւմուտքի մէջ, օրիորդներու եւ կիներու նոր սերունդներուն մէջ:

[See Translation](#)



1 share



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post

X



Blog H

December 8, 2024 · 

...

Այդ անմիջական տարածաշրջանին մէջ, մի՛միակ երկիրը որ ոչ միայն չանեացաւ, այլ որ հիմա իսկական ապագայ ունի՝ Լիբանանն է:

* * *

Սուրիան փորձեց, շա՛տ փորձեց քանդել ու խորտակել այս, տակաւին կանգուն Լիբանանը:

Չայն պահ մը ուղղակի բռնագրաւեց: Չանաց զայն դարձնել՝ Սուրիա, կայսերապաշտական «Մեծն Սուրիոյ» մասնիկ մը:

* * *

Երկու անկիւնադարձային, ճակատագրական պահեր եղան, երբ Լիբանանը կրնար լրիւ վերականգնիլ:

Երկու անգամն էլ, Իրանի եւ Ռուսաստանի մեղսակցութեամբ, Սուրիան բառացիօրէն մեռցուց, սպաննեց այդ երկու յոյսերը, մարմնաւորուած՝ Պաշիր Ժըմայել եւ Ռաֆիք Զարիրի արտակարգ ղեկավարներով:

* * *

Ամէն մէկ անգամ որ սուրիացի զինուորները - հայր Ասատի հրահանգով - իմ մանկութեանս թաղերուն մէջ զիս կը կանգնեցնէին, հիաճըզի վրայ, կոշտ ու կոպիտ, սպառնական կերպով, ստուգելու համար հաուկիյէս, եւ ապա արտօնութիւնը շնորելու համար որ ճամբաս շարունակեմ... իմ երկիրս մէջ, իմ ծննդավայր հայրենիքիս մէջ!!, այդ ամէն մէկ անգամը, մէջս կուտակուած է ցասում՝ Սուրիոյ դէմ:

Մնայուն սուրիական հաճըզ մը կար, Զամրայի մուտքին, Levon Travelի գրասենեակներուն առջեւը (quite an irony... je me comprends...) :

Սինեմա երթալու ատեն, այդտեղ զիս այդպէս կը վարկաբեկէին, եւ ներքնապէս այնքան կը զայրանայիր, որ վազ կ'ացնէի սինեմայէն, ետ տուն կ'երթայի:

Քքաումիներու միջոցաւ, Պոլոնիաս ալ գրաւած էին: Եւ այդտեղ, պտտելու իսկ իրաւունք չունէինք! Լման ամայացած էր, եւ ճամբայէն քեզ կ'առնէին կը տանէին: Եւ այդպէս ալ ըրին, ինծի: Զազիւ տասնըինգ տարեկանիս: Բարեբախտաբար չծեծեցին, բայց այնպէս մը ըրին որ պիտի ծեծեն, եւ այդ բարոյական հարուածները աւելի ցաւագին եւ մնայուն են, քան եթէ մարմնապէս ծեծէին:

Իմ հայրենիքիս, իմ դպրոցական ամառնային արձակուրդներու գիւղիս մէջ, օտար զինուորները եկեր են, եւ զիս կ'ահափեկեն: Պատանի տարիքիս...

Եւ այդպէս, իմ եւ իմ մօտիկներուս հետ վարուած են այդ սուրիացի զինուորները, մեր տուններուն շուրջ, տարիներո՛վ...

Ամենախոր կերպով կը վիրաւորէի, երեխայ տարիքիս, երբ որ կը տեսնէի թէ Պապայիս հետ ալ այդպէս կը վարուէին...

Դեռ կը տեսնեմ իր աննկարագրելի ժպիտը, այս պահերուն... Կապոյտ Soճ Քորօնէթին ըէթրովիզէօրին մէջէն աչքերը ինծի ուղղած... որպէսզի չմտահոգուիմ...

* * *

Ի դէպ, մինչ մեր, մահմետական թաղամասերուն մէջ, այդպէս տէր ու տիրական դարձած էին սուրիացի զինուորները, միաժամանակ, եղաւ պահ մը երբ, նոյն Սուրիան, ռազմական օղանաւերով, շաբաթներով ռմբակոծեց Լիբանանի քրիստոնեայ թաղամասերը, կրա՛կ ու մետաղ թափեց՝ այդ խիտ թաղերուն մէջ, առանց պատսպարանի բարձր շէնքերու մէջ ապրող քաղաքացի բնակչութեան վրայ:

Մեծ-ծնողքս այդ ռումբերուն տակն էին, Էշրէֆիէ: Խոհանոցին մէկ անկիւնը ապաստանած էին, հին ու ծանր սառնարանին քաշելով իրենց առջեւը, յուսալով որ անոր մէջէն չեն անցնիր անդադար պայթումներու բեկորները:

* * *

Այսօր, մէջս կուտակուած այդ խոր ցաւերուն մէկ մասը գոնէ, սպիացան:

Յաղթեցինք, Մամա՛: Էշրէֆիէ ծնած, խրոխտ մամաս: Քի՛չ մըն ալ մնայիր, այս օրն ալ տեսնէիր: Գոնէ պահ մը, ուրախութեան նման բան մը զգայիր, թելվիզիօնիդ առջեւը...

Սուրիան ինկաւ, մեր Լիբանանը ոտքի է: Եւ Իրանի քաղցկեղային բջիջներու վիրաբուժական մաքրագործումով իր ծոցէն, մեր ծննդեան հայրենիքը հիմա ազատագրուած է:

Վերէն վայելէ, այս հոյակապ պահը:

Մ. Զայրուկ Շամլեան

See Translation



1 comment

 Like

 Comment

Most relevant 



John Baljian

Դժբախտաբար Սուլթան Էրտողան Աի տիրապետութեան տակ

8w

Like

Reply

See translation



Write a comment...



Blog H's Post

X



Blog H shared a memory.

January 10 at 8:03 AM · 

...

Այս ներքեւի յիշատակուած գրառումը, յատկապէս այժմեական է, քանզի անցած օրերուն կառավարութիւնը սկսաւ բացայայտ կերպով խօսիլ ԶԶ-ն Եւրոպական Միութեան անդամ դաձնելու մասին... ինչ որ անշուշտ հոյակապ բան մը կ'ըլլայ, եթէ իրականաւի ըլլար, սակայն ափսոս այդ երկիրը քիչ մե անելի կը մօտեցնէ ոչ թէ Եւրոպական Միութեան, այլ... Ուքրանիոյ: Ուկրաինացումի: Բայց աս պարագլին, ռազմական ներխուժումը կրանյ նուրբ կերպով տեղի կ'ունենայ: Օրինակի համար, «մեծերը» կը համաձայնին որ ԶԶի վրայով extraterritorial միջանցքը պիտի վերահսկէ Ռուսաստանը: Իր գիւտուրներով: Սուրիան - եւ շուտով Իրանը - յանձնելէն ետք, այդքա՛նն ալ պիտի չշնորհեն Փութինին... ասոնք ալ կ'երագեն կոր որ Եւրոպական Միութիւնը իրենց բարի եկաք, համեցէք պիտի ըսէ...

See Translation



2 Years Ago

See your memories 





Blog H

January 10, 2023 · 

ԶԶ իշխանութիւնների հաշուարկը այն է որ, Արցախը կը դառնայ բացառապէս Ռուսաստանի խնդիրը. նկատի ունենալով որ դրա անհետացումը կը նշանակէ Թուրքիոյ/ՆԱՏՕի ամբողջական մուտք եւ տեղաւորում Անդրկովկասի մէջ:

Անկէ ետք, իրենք Զայաստանը կը կարենան ազատագրել Ռուսաստանի լուծից, ու զայն կը միացնեն ՆԱՏՕին: Եւ այդպէսով, Թուրքիան եւ իր անդրկովկասեան արբանեակը, Արեւմուտքի հովանաւորութեամբ կամ վերահսկողութեամբ, հանգիստ կը թողեն Զայաստանը: Որ հետեւաբար կը զարգանայ, կը բարգաւաճի, եւ կը դառնայ կատարեալ դրախտավայր:

Տգիտութիւնն ու տիմարութիւնը անելի վատ են, անելի աղետաբեր, քան թէ, տառացի իմաստով` որեւէ դաւաճանութիւն:

Իսկ փոխաբերական իմաստով, դաւաճանները անոնք են որոնք անզօր եղան այս դժոխածին վարչակարգի գոյացումը կանխելու, յետոյ ալ խղճալիօրէն անկարող` զայն փոխելու:

Մ. Զայրուկ Շամլեան

Յ.Գ. Կը յուսամ թէ բաւարար յստակ է, որ վերեւ գրածիս երկրորդ պարբերութիւնը լրիւ ծաղրական է: Դառն, ցաւագին հեգնանք:

Նախ, քանի որ ոչինչ կրնայ սանձել փան-թուրանիզմը, եւ ամէն դէպքում ՆԱՏՕի արեւմտեան պետութիւնները Զայաստանի համար իրենց մատը մատին չեն զարներ, նոյնիսկ եթէ ան Արցախէն հրաժարի, իր պորտը ամբողջովին կտրէ Ռուսաստանի հետ եւ սիրոյ զիլ բացականչութիւններով լրիւ նետուի իրենց գիրկը: Ռուսաստանի այդ կարելոր - ՆԱՏՕի սահմանակից - դաշնակիցին վերացումը, անէացումը, իրենց համար լայնօրէն բաւարար է: Յաւելեալ գլխացաւի կարիքը չունին, նամանաւանդ Թուրքիոյ հետ, այդպիսի խեղճ, խղճալի ու աննշան երկրի մը համար:

Յետոյ, նոյնիսկ ՆԱՏՕի անդամ դառնալը բնաւ երաշխիք չէ, որ նոյն ռազմական դաշինքի անդամ Թուրքիան թշնամի չդառնայ կամ չմնայ: Ամենացայտուն եւ անմիջական օրինակը` Յունաստան:

Եւրոպական Միութեան անդամակցիլը իսկ բանի չծառայէր, Թուրքիոյ նկատմամբ: Ատոր ալ օրինակը` «Հուսիսային Կիպրոս»ը:

Վերջապէս, ամէն պարագայի, Ռուսաստանը այդպէս հեշտօրէն «ազատ չ'արձակեր» Զայաստանը: Այլ, ի հարկին, զայն կը վերածէ` այժմու Ուկրաինային: Մինչ Փաշինյանը երբեք չստանար Չելենսքիի ամերիկեան զօրակցութիւնը - Եւրոպան այդ խաղէն դուրս է արդէն - :

Կը կրկնեմ, ինդիրը մի քանի հաւանական գործակալները չեն: Այս վարչակարգը հիմնականօրէն բաղկացած է` արտասովոր աստիճանի անխելք, տգէտ արարածներէ: Եւ հայաստանցիների զանգուածային մեծամասնութիւնը զանոնք կը համարէ իրենց ճշգրիտ նոյնապատկերը, հարազատ արտացոլացումը: Իրաւացի կերպով:

See Translation

 Like

 Comment

Write a comment...

Blog H's Post

X



Blog H

December 10, 2024 · 🌐

Անշուշտ թե Չինաստանը սոսկալի բանակ մը ունի, քաջարի զինուորներով, բարձ որակի զինամթերքով:

Բայց եթե Չինաստանի ունենար այն աստիճանի ռազմական ուժը, որ կը փորձէ կոր քալեցնել թե իբրեւ թե ունի [պլաֆ մը, որ երկար ժամանակ քալեցուցին՝ Ռուսաստանը, Իրանը... մինչեւ որ հիմա տեսանք իրականութիւնը...], եթե Չինաստանը ունենար այդ ուժը, անցած երկու տարիներու ընթացքին կը ջանար գրաւել Թայուանը - քանի որ այդ ալ իր երազանքն է - :

Ինչո՞ւ պիտի սպասէր: Որ, մինչ այդ, Ռուսաստանը այսքան տկարանա՞յ... խրի ու խայտառակովի՝ Ուքրանիոյ մէջ, կորսնցնէ Զըզպալլան, Զամասը, Սուրիան, Իրանը... Եւ այդպէսով, դեռ աւելի զօրեղանան իր արդէն իսկ զօրաւոր թշնամիները...

* * *

Ուրեմն, Չինաստանի հանճարեղ ծրագիրը այն է որ [կարդալ երգիծական եղանակով], աշխարհի մէջ իրեն զօրակցող որեւէ կարող պետութիւն չմնայ, երբ որ ինք պիտի ձեռնարկէ իր ռազմական, կայսերապաշտական գործողութիւններուն:

Քանի որ ինք կ'ուզէ միս-միսակը կռուիլ, աշխարհի մնացեալ բոլոր զօրաւոր երկիրներուն դէմ:

Ինչպէս որ Bruce Lee-ն, հա՞... Երբ որ ան, իր ֆիլմերուն մէջ, քովի ընկերները՝ ձեռքովը կը կանգնեցնէ, ետեւ կը հրէ, անխօս ու այդ շարժումովը միայն՝ դուք մէկդի կեցէք կ'ըսէ... Ապա շապիկը կը պատռէ, սոսկալի stance մը կ'առնէ, սրունքներն ու թելերը լայն բացած, բթամատովը՝ քիթին եզերքը թեթեւ մը կը քերէ, եւ կը սկսի միս-միսակը կռուիլ, հարիւր հոգիի դէմ.. որոնք բոլորը, պահ մը ետք, գետինները փռուած կ'ըլլան, արիւնլուայ...

Ռազմական գետնի վրայ, նկատի առնելով իր համաշխարհային թշնամիներուն միացեալ ուժը, Չինաստանը՝ թուղթէ վիշապ մըն է:

Վագր ծպտուած կատու մը, որ պոչը ոլորած, իր անկիւնը քաշուած է, որպէսզի իր գլխուն ալ չպայթի տեղի ունեցածը...

Մինչ իր ռազմական դաշնակիցները մէկ առ մէկ ոչնչանալու վրայ են, աշխարհի տարածքին:

* * *

Չինաստանի միակ «պատերազմը», Արեւմուտքի դէմ, տնտեսական գետնի վրայ է ու կը մնայ:

Եւ այդ, այդ գետնի վրայ, այդ հսկայական, հարուստ, հզօր, ուսանիլ եւ աշխատիլ սիրող ժողովուրդով այդ հնամեայ երկիրը, կրնա՞յ համաշխարհային Bruce Lee հանդիսանալ:

Նայիս նէ... այդ առումով, ԶԶին պէս է, Չինաստանը... Բիզնես, ամէն բանէ վեր:

Բայց անշուշտ Չինաստանը, երեւի ԶԶԵն քիչ մը աւելի մեծ երկիր մըն է... Որուն սահմանները բնաւ չեն վտանգուած: Որ զօրեղ բանակ ունի:

Ոչ ոք Չինաստանի վրան պիտի չյարձակի, եթէ ինքը բարի մնայ:

Եւ ուրեմն իրեն համար, խաղաղութիւնը իրօք համազօր է զարգացման եւ բարգաւաճումի:

Ատոր համար ալ, Չինաստանը չօգտագործեց՝ Եւրոպայի եւ Միջին Արեւելքի մէջ միաժամանակ տեղի ունեցող պատերազմները – արտակարգ պատեհութիւն մը, որ մէյ մըն ալ չի գոյանար -, ինք ալ՝ Թայուանին վրայ յարձակելու համար:

* * *

Չինաստան vs Արեւտմուտք տնտեսական պատերազմն ալ, կը լուծեն համաձայնաբար:

ԱՄՆ նոր վերընտրուած նախագահը, դեռ օրինապէս պաշտօնը ստանձնելէ առաջ իսկ, արդէն առաջին համազարկը արձակեց, preemptive strike մը ըրաւ: Չինաստանի ապրանքներուն դէմ, մաքսային սակագիներու հիւլեական բարձրացում մը յայտնեց: Այդ հիման վրայ, շուտով կը նստին բանակցային սեղանին շուրջ, deal մը կ'ընեն:

Pax Americana !

Բայց այս անգամ՝ լման աշխարհին, երկու կիսագունդերու տարածքին:

Մալածեց...

Մ. Զայդուկ Շամլեան

See Translation



1 share

Like

Comment

Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 1, 2024 · 🌐



Ասկէ աւելի թափանցիկ չի կրնար ըլլալ դէպքերու ընթացքը: Յստակ, տեսանելի, ակնյայտ:

. Իսրայել/ԱՄՆ ռազմական գործողութեան հիմնական - եւ վերջին - թիրախը՝ Իրանն է: (Որուն տերը, տուեալ տարածաշրջանին մէջ, Ռուսաստանն է:)

. Լիբանանի մէջ, լման գլխատեցին Իրանի Զըզպալլան: Մէկ առ մէկ կամ խմբովին, ոչնչացուցին անոր բոլոր ղեկավարները: Այդ կազմակերպութիւնը մէյ մըն ալ չի կրնար ետ ոտքի կանգնիլ:

(«Չինադադար»ը ընդունիլը, Իրանի այաթոլլաներուն capitulationն է այդ ռազմաճակատին վրայ: Մինչ նախապէս, կը մերժէին որեւէ զինադադար, եթէ միաժամանակ չդադրի Զամասի մաքրագործումը Պաղեստինի մէջ, ինչ որ դեռ ընթացքի մէջ է, տեւաբար ու անդադար ... - :)

. Սուրիոյ մէջ, նշանակալից յարձակում մը սկսած է՝ Իրանի դէմ: Status quo, պիթթի!

Այդ ալ որ հասնի իր աւարտին, կարգը կու գայ ուղղակի եւ վերջնական յարձակումին՝ Իրանի վրայ:

. Մինչ Ռուսաստան, խրած է, խորունկ՝ Ուքրանիոյ արիւնոտ ճահիճին մէջ:

. Եւ there's a new Sheriff in town, ԱՄՆի մէջ...

Որ իր նախորդ նախագահութեան ընթացքին, ուղղակի կերպով ռմբակոծեց արդէն Սուրիան:

Ապա, Իսրայելի մէջ ԱՄՆ դեսպանատունը տեղափոխեց՝ Երուսաղեմ...

Մ. Զայրուկ Շամլեան

Յ.Գ. Չինեալներու մէջ խմբակ մը միայն բաւարար եղաւ, որ Զալէպը իյնայ... կայծակնային արագութեամբ...

Որովհետեւ սուրիական բանակ, եօխ:

Իսկ Իրանը եւ Ռուսաստանը, միայն օդային ռմբակոծումներով չեն կրնար վերատիրանալ Զալէպին:

Այդ ձեւով, կրնան միայն զայն քիչ մը աւելի վերածել՝ աւերակներու դաշտի:

See Translation



Like

Comment

Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 7, 2024 · 🌐



Աստատեաց Տունը, փլաւ:

50 տարիներու ընտանեկան բռնատիրութիւնը, պիթթի: Սուրիա, եօխ:

Իսկ 14 տարիներու «քաղաքացիական» պատերազմին վերջին , աւարտական հանգրուանը, յանգումն ու եզրափակումը, տեւեց մի քանի օրեր միայն: Եւ կատարուեցաւ գրեթէ առանց կռիւի:

ԱՄՆ կառավարութիւնը, գոնէ այս օրերուն, յաջողեցաւ իր ժողովուրդին կլլեցնել որ հիմա, ո՛հ, շա՛տ մտահոգ է՝ Սուրիոյ ապստամբ ուժերու յաղթանակով...

Օպամայի նախագահութեան օրերէն ի վեր, բացէ ի բաց, Ասատի վարչակարգի անհետացումը կ'ուզէ, կը պահանջէ, կը հետապնդէ ԱՄՆ-ն:

Ճիշդ ինչպէ՞ս պիտի հասներ ան իր այդ նպատակին, առանց Սուրիոյ ապստամբ զինեալներուն ?!?! Առանց այդ կռուողներուն, որ հիմա աւելի քան երբեք՝ «ահաբեկիչներ» կը կոչեն Սուրիոյ քանդումը ծրագրած արեւմտեան պետութիւնները:

Մի մտահոգուի՞ք, եալլա՜ր... Այդ սիւննիթ իսլամիսթերով կը զբաղուի ձեր սերտ դաշնակից Թուրքիան: Արդէն իրմէ կախեալ են անոնք:

Իսկ հիմա այլեւս, Թեհրանի Այաթոլլաները թող լրջօրէն դասաւորեն իրենց exit strategy-ն...

Պաշարը գոնէ կարողացաւ իր փախուստը յաջողութեամբ սակարկել: Իրանի բարձրագոյն իշխանաւորները պիտի կարենա՞ն նոյն շնորհումը ստանալ: Այդ է՝ Իրանի մօտակայ ոչնչացման վերաբերեալ, մնացած միակ հարցականը:

Ռուսաստանն ալ, իրեն համար լաւագոյն պարագային, կը վերստանայ իր Վրաստանը: Եւ Ուքրանիայի պատառիկներ, թերեւս...

Մ. Հայդուկ Շամլեան

See Translation



Like



Comment



Share



Write a comment...





X



November 25, 2024 · 🌐



See Translation

November 25, 2022 ·

See Translation

2 comments



Like



Comment

Most relevant ☒

Ինչ է տարբերությունը չորս տարի առաջ և այսօր ;
Ձեր գրածը այս օրն ալ կը ներկայացնէ ;

10w Like Reply See translation



Blog H

Sara Jabrayan տարբերությունը այն է որ, չորս տարի առաջ, նուաեզ թիւով անձեր համաձայն էին որ այդ է՝ իրականութիւնը. նաեւ, հիմա, «արհեստավարժ» ընդդիմադիրները անելի մօտեցած են իրենց այդ նպատակին. քիչ մըն ալ ապաստել, որպէսզի վերսկսի թուրքերուն ռազմական լայնածաւ... [See more](#)

10w Like Reply See translation



Write a comment...



Blog H's Post

X



Blog H shared a memory.

January 8 at 8:50 AM · 🌐

...

դուրս եկան, հա, բայց այս գրառումես դեռ՝ 9ը՝ ամիսներ ետք... բառացիորեն՝ կրակներու մեջէն... անոնք որոնք կարողացան խուսափիլ հրկիզումէն...

«դե բա, կ'ուզես կոր Արցախը հայաթա՛փ ընել... պետք է որ մնա՛ն այդտեղ...»

իսկ այդ մնացեալ, երկա՛ր ամիսներու ընթացքին, այդտեղ մնացած «իշխանաւորները» միմիայն իրարու միսը կերան... այդ ձեւով դիմացան երեւի սովահարութեան...

See Translation



2 Years Ago

See your memories





Blog H

January 8, 2023 · 🌐

Ան որ համաձայն չէ նախորդ գրառումիս հետ [իերթական լեղապատառ կոչս՝ շրջափակուած արցախցիներին, որ ջանան անմիջապէս դուրս ելլել այդտեղից], եւ որ - ներկայիս - չի բնակիր Արցախի մէջ, թող բարեհաճի ինք երթալ բնակիլ այդտեղ, իր ընտանիքով:

Իսկ եթէ - ապուշ - պատասխանը պիտի ըլլայ որ՝ դեհ... ճամբան փակ է..., այսինքն ինչ, եթէ փակ չըլլար, կ'երթային այդտե՛ղ ապրելու: Լաւ, այդ պարագային հետաքրքրական պիտի ըլլայ հասկնալը թէ ճանապարհը փակուելէն առաջ ինչո՞ւ այդտեղ չտեղափոխուեցան:

Կեղծաւոր, խաբէբայ, անզգամ, անմարդկային, թերեւտոյիկ, ինքնահաճ, անխելք, անբարոյ եւ հրէշային արարածներ են, բոլոր անոնք որոնք այս նիւթին մէջ իբրեւ թէ Հայ Ազգին համար կը պայքարին, հեռուէ՛ հեռու, Արցախի բնակիչներու կեանքերուն հաշւոյն:

Նաեւ պիտի ուզէի գիտնալ թէ հիմա «Արցախ, Արցա՛խ» կանչող այդ խումներամ հայերը, անցած տասնամեակներուն, երբեւիցէ ի՞նչ կատարած են՝ Արցախի համար: Գետնի վրայ: Շօշափելի առումով:

Վստահ եմ որ անոնցմէ շատեր կան, որոնք մէկ անգամ իսկ իրենց ոտքը չեն դրած Արցախի հողի վրայ: Ներառեալ ոմանք, որոնք մինչդեռ այցելած են Հայաստանը... Երեւանի քաՖէները...

Շարունակեցէք հիմա ձեր հանգիստ երկիրներուն մէջ ձեր աղիողորմ պոռալ-կանչելները, ձեր հոյակապ ցոյցերը, խրոխտ բանաձեւներու որդեգրումը, սոսկալի յայտարարութիւններու ձեռքբերումը, ֆալան-ֆըստըիս, մինչ մէկ ամիսէ ի վեր այդ մարդիկը այդտեղ բանտարկուած են, լքուած, խոցելի, անտէր եւ անպաշտպան, շրջապատուած արիւնարբու գազաններով:

Փի՛ւհ:

Մ. Հայդուկ Շամլեան

Յ.Գ. Վաղը եթէ, Աստուած մի արասցէ, դարձեալ հայի յորդառատ արիւն հոսի Արցախի այդ մնացորդին մէջ, իմ խիղճս գոնէ հանգիստ կ'ըլլայ, որ ես մարդկային ճիշդ կեցուածքը ունեցայ այս նիւթին մէջ, եւ չվախեցայ զայն - նորէն հոսանքի դեմ - հանրային կերպով արտայայտելու: Սակայն այդ միւս հայերուն համար, որոնք հիմա քաջաբար կը քաջալերեն որ այդ մարդիկը մնան այդտեղ, տարբերութիւն չ'ըներ: Զանի որ խիղճ չունին արդէն:

Օդային, երագային եւ վերացական բաներով, զորս իրագործելու համար փաստօրէն բաւարար ուժ չկարողացանք ունենալ կամ պահել, յետոյ ալ 2018եան հաւաքական ինքնասպանական հայվանութեամբ, արդէն բազմաթիւ հազարներով զոհեր տուինք: Ու... վերահաստատուեցան հակաազգային իշխանաւորները: Անկէ ետք, դեռ մի քանի հազար նահատակներու եւ՛ս կարիքը ունինք, միեւնոյն նիւթին առնչութեամբ... ինչի՞ համար... Ռուսաստանը եթէ կ'ուզէ կոր պահել այդ Արցախիկը, որպէս Անդրկովկասի մէջ իր էական ռազմաբազան, գլխուն ճարին թող նայի, թող ձեւը գտնէ այդպէս անելու... մենք, we have paid our dues, ինչպէս կ'երգէ ՊիՊիթինկը, իր անսման Լյուսիլի սրտաճմլիկ ճիչերու ընկերակցութեամբ:

See Translation

Like

Comment



Write a comment...



X



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post

X



Blog H

November 8, 2024 · 

Եթե կան այս էջը ընթերցողներ, որոնք կը կարծեն թե Թրամփի նախորդ նախագահության օրօք, ԱՄՆի մէջ Օրէնքի դէմ դարձաւ՝ կամաւոր վիժումի հնարաւորութիւնը, եկէք այս մէկն ալ բացատրեմ:

* * *

Այդպիսի բան, տեղի չունեցաւ:

Այդ մասին՝ Օրէնք չկար:

Կար՝ ԱՄՆ Վեհագոյն Դատարանի հին որոշում մը: Որ կ'ըսէր թե՝ ԱՄՆի տարածքին, ով որ կ'ուզէ կրնայ կամաւոր վիժումի ենթարկել իր անծին երեխան :

Թրամփի շնորհիւ վերակազմուած սոյն Վեհագոյն Դատարանը, չեղարկեց այդ որոշումը:

Սակայն բնաւ չըսաւ թե, այնուհետեւ, ԱՄՆի մէջ արգիլուած է՝ կամաւոր վիժում կատարել:

Սոյն Դատարանը ըսաւ պարզապէս թե, նկատի առնելով այդ նիւթին բնոյթը, այդ մասին պէտք է որ որոշում առնէ՝ իւրաքանչիւր ԱՄՆ նահանգ: Նահանգային մակարդակի վրայ: Ըստ նահանգի բնակչութեան կամքին:

Անկէ ի վեր, եւ վստահաբար ընդմիշտ, ԱՄՆի բազմաթիւ նահանգներու մէջ, ՈՐԵԻԷ օրինական խոչընդոտ չկայ եւ երբեք պիի չըլլայ՝ կամաւոր կերպով վերջ դնելու յղիութեան:

Մի քանի նահանգներու մէջ, որոշ տարրական սահմաններ հաստատուեցան, այդ ուղղութեամբ: Օրինակի համար՝ յղիութեան մինչեւ ո՞ր շաբաթը կարելի է կամաւոր վիժում կատարել:

Եթե նահանգի մը մէջ, նիւթի առարկայ ազատութիւնը որեւէ ձեւով խնդիր մըն է, յղի կնոջ մը համար որ կ'ուզէ վերջ դնել իր յղիութեան, կրնայ պարզապէս նկատի առնել որ՝ ԱՄՆի նահանգներուն միջեւ՝ չկան անցակէտեր, սահմանային պահակներ...

Ան կրնայ երթալ ուր որ ուզէ իր երկրին մէջ, եւ հանգստօրէն ստանալ իր ցանկացած վիժումը: Նուազագոյն կանոններով, որոնք աշխարհի ամէն կողմը կան, օրինակի համար՝ փորիդ մէջի երեխան չես կրնար օրինապէս սպանել, յղիութեան ութերորդ ամիսը... (երգիծանք չէ, ափսոս, այս ըսածս, քանի որ իրապէս կան՝ քաղաքական գործիչներ, ըստ որոնց, կնոջ մը իրաւունքն է այդպէս ընել, եթէ ինք այդպէս ուզէ... լման կազմուած երեխան, իր փորին մէջ սպաննել տայ... յանուն կիներու իրաւունքներուն եւ ազատութեան...) :

Աւելցնենք որ ԱՄՆի ամբողջ տարածքին, անշուշտ պակասը չկայ այլազան միջոցներու՝ յղի չդառնալու:

Կայ նաեւ «morning-after pill» ըսուածը: Այդ հապը որ կը կլլէ այն օրիորդը կամ կինը, որ չ'ուզեր յղի դառնալ, բայց որ նախորդ օրը սեռային յարաբերութիւն ունեցած է, առանց զգոյշ ըլլալու: Այդ հապը որ կլլէ, հոփ, յղիութիւնը չսկսիր անգամ: Երեխային առաջին բջիջը՝ «հաւկիթին մէջ կը խեղդուի», so to speak ...

ԱՄՆի տարածքին, anti-contraceptif միջոցները անտեսած որեւէ կին, կրնայ այդ pre-emptive abortionի դեղահատը ստանալ... իր տունը: Չայն հեշտօրէն ապսպրելով՝ Զամացանցի վրայ:

Այս իրականութիւններու լոյսին տակ, որքանո՞վ օգտակար էր, որ այս նիւթը՝ մատի փաթթոց դարձնէին հակա-Թրամփ քաղաքական եւ հասարակական հոսանքները: Մինչ, ԱՄՆ-ն շատ լուրջ եւ ծանր, ներքին այլ խնդիրներ ունի: Որոնց մասին կը խօսի միայն՝ Թրամփը:

Ի դէպ, հետաքրքրական է, սոյն«կնապաշտպան»ները, կամաւոր վիժում կատարելու ազատ այլընտրանքը կը կոչեն կոր... reproductive rights of women... reproductive rights ? բայց... ճիշդ հակառակը չէ՞, իրենց ուզածը... go figure...

Մ. Զայրուկ Շամլեան

See Translation



1 share

- Like
- Comment
- Share



Write a comment...





×




Abstract

Էն վախտ, երբ որ անդադար այս կոչը կը կատարէի, ոմանք - Երեւան բազմած... -, կը «բարկանային»... որ, վայ, դուն ուրեմն կ'ուզես կոր որ Արցախը հայաթափուի ?!?!

Խնկ Արցախի ԱԱԾԻ այդ յայտարարությունը որոնս կ'անկարգելի այս գրառումսի եջ, երեկի ատոր հաւատացնի նաեւ այն Արցախի իշխանաւորները որոնք թողորեցնու ձեռքը մնացիւ, թրցալաւս բախտի մէջ եւն իմնա... Ի ղեպ, ԱԱԾԻ որեւէ ստոր չկայ, չէ՛, այդ գերիներուն մէջ... անոնք ամենալաւ գիտնի ճիշդ ատենին՝ կծելի, փախցիլի, իրենց մարդ չկուր չի...

See Translation



ՏԱՐՅԱԼՈՒՄ. 3ԻՄԱՐ

NOW !!

«Արցախի Հանրապետության Ազգային Անվտանգության Ծառայությունը» [10]
 յայտարարության մը անձակեց, ի դէմ տարածաշրջանի բնակիչներին տարիանելու
 վերաբերյալ լուրերուն, նշելով որ դրանց նպատակը՝ խուճապ տարածելն է բնակչութեան

«Կոչ ենք անում չորվել կեղծ լուրերի և պահպանել հանգստություն: ԱՅ ԱԱԾ-ն լիովին վերահսկում է իրավիճակը հանրապետության տարածքում»

Հանցագործը թող մնալ ընտանյուհիսիր, քանզի լիովին վերահսկում էր իրավիճակը, հայ...

Վստ արհեստներ մաս

Ինչպես որ «վերահսկում էիք իրավիճակը», երբ որ Երեւանի ինքնակործան «յեղափոխությունը» տարածուեցաւ այդտեղ, եւ Փաշինյանին սրճեփղ Արցախի նախագահ՝ ընտրուեցաւ:

Ինչպես որ վերահսկում էի իրավիճակը, մինչև այն պահը երբ Շուշին յսակարծ, ափալ-թափալ դատարկեցի՞ր, առանց որ բնակիչները ժամանակ ունենան իրենց հետ երկու կտոր ապրանք իսկ կարենալ տանելու:

Ինչպես որ վերահսկում էիք իրավիճակը երբ, դեռ այսօր իսկ, Ստեփանակերտի հրապարակին վրայ, ոմանք ռուսներին դեմ էին բողոքում, օգնության կանչելով արեւմտեան կառավարութիւնները:

Եթե չէջ կրկար երաշխաւորել, լոյսըն եւ իրապէս՝ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԼ, քնակըթեան մարմնային անվտանգութիւնը (եւ չէջ կրկար, պարապ-պարապ մի խօսիչ), պէտք է որ ուրեմն զմեռ երեկաններ, կիկեկե ու արեւելեանը՝ որո՞ւ պալաւորեոնք, սկսաւապը:

Յետոյ, եթե իսկապես կայուն դառնայ կացութիւնը, տարրական չափով՝ ապահով, կը վերադառնան:

Թերեւս նոյնիսկ, այդ ատեն, իրենց հետ կու գան նաեւ շուտովանի՛ց ուրիշ տեղեր փախած, քնիկ արցախցիները...

Զի կարելի է այլևս այդ խոցելի բնակչությանը գործածել որպես «մարդկային վահան», որպես մարտավարական միջոց՝ արտաքին աշխարհի նկատմամբ, եւայլն. Զի կարելի...

Յառկապես երեխաների՝ քաղաքական վտի շահագործումը, թողեք երեւանի նոր իշխանատուներին. նրանք դուր փարպետներն են: Չնայած, իրենց անառամ շնիկն է՝ Նաե, ու տակալին, ձեր այդ կարծեցէյալ «Նախագահիր» :

Մ. Զայրուկ Շամլեան

3.9. Հայաստանի եւ Ափիղդի մէջ ան որ համաձայն է այս գրածս հետ, թող բարեհաճի ինքը երթայ ու մայի հինա Անգար: Օլոխ-ջանժուխ: Եթէ երեւիցէ այդպէս ըլած է, գտնէ մէկ անգամ իսկ, այդ բառորդ դարուայ ընթացքին երբ որ Դարաբաղող Մէրն էր:

3.9.2 ՀՀ-ի եւ Արցախի անտանելի իշխանաւորները, ամէն առիթով, կ'աղաղակեն կոր ողբ, հեաւ, Արցախի մէջ՝ զեղասաւանդօն տեղի պիտի ունենայ:

Տթժ այրյաւ է, ինչպէ՛ս կարելի է խոցելի քնակչութիւնը դուրս չհանել այրտելն !!

Այլապէս - օտարներն ալ էշ չեն -, այդ ցեղասպանութեան ահագանգները ուրեմն՝ Ստալինոս-Արախանիկութեան

Իսկ երբ որ, օր մին ալ, իսկական գալլի գալ..

Ի դեպ, Արցախի ԱԱԾ-ն խօսում է խուճապ չստեղծելու հրամայականի մասին..

Բայց... այդ ցեղասպանության մասին վերոնշյալ իշխանաւորներու զիլ ահագանգները, խուճապ չ'են ստեղծեր Արցախի բնակչության մէջ !!!

Չենե մը, անոնք վարժուած են հայկական իշխանութիւնների ըսածները երբեք լուրջի
չարեւուր...

See Translation

Like

■ Comment





Blog H's Post



Blog H

December 30, 2024 · 🌐



Թէ արկած է, կամ դիտումնաւոր արարք, դա ուրիշ հարց:

Սակայն հաստատ բան է որ Ադրբեջանի քաղաքացիական օդանաւը խփեց՝ Ռուսաստանը:

Եթէ Փուլինը կը կարծէ թէ, այս առիթով, պիտի վերաշահի հայերուն համակրանքը իրեն հանդէպ, ան չարաչար կը սխալի:

Մենք երբեք չէինք ուզեր որ ինք անգէն քաղաքացիներ սպանէ: Քաղաքացիական օդանաւ, վար առնէ:

Այլ կ'ակնկալէինք որ իր պատասխանատուութիւնները ստանձնէ, եւ կրակէ՝ Արցախի - ապա գոնէ ԶԶԻ - վրայ յարձակող զինուորներուն վրայ: Արցախը ռմբակոծող օդային սարքերը խփէ, վար առնէ: Ոչ թէ ճամբորդ ընտանիքներ...

Բարոյագուրկ, հրեշային, վախկոտ արարած մըն է Փուլինը: Եւ իրեն բնաւ պիտի չներեն ազգասէր, մարդավարի հայերը:

Մ. Զայրուկ Շամլեան

[See Translation](#)



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

January 9 at 9:19 AM · 🌐



Իսկապես որ Համացանցը հիւանդ է:

Խոր մտահոգութեամբ կը միացնես համակարգիչդ – ես ձեռքի կիզմօ չունիմ -, կ'ուզես տեղեկանալ թէ ինչ է կացութիւնը Լոս Անճըլէսի մէջ, այդտեղ բռնկած դժոխային հրդեհներուն կապակցութեամբ:

Առաջին տասը-քսան լուրերը, միայն՝ այն հռչակաւոր դերասաններուն մասին է, «աստղերուն», որոնք իրենց տուներ կորսնցուցեր են:

Օղլում, անոնք շատ հեշտօրէն նոր տուները կը գնեն, կը կառուցեն: Մինչ այդ, կը բնակին շքեղ հիւրանոցներու մէջ: Կամ կ'երթան իրենց այլ, բազմաթիւ այլ տուններէն մէկ հատին մէջ, ուրիշ քաղաք մը կամ երկիր մը:

Հազարներով «սովորական» մարդոց կեանքերը խորտակուած են: Ահաւոր Աղէտ մըն է:

Այսինքն, ՉԼՄ-ներ, շեշտը դնելով entertainment աշխարհի «աստղերու» նիւթական կորուստներուն վրայ, կ'ուզէք կոր որ մնացեալ աշխարհը անհոգ դառնայ, տեղի ունեցած այս մարդկային Աղէտին նկատմամբ:

Մէկ քայլ անդին, անոնք որոնք իրենց - կամ իրենց ժողովուրդին – ցաւերով կը տառապին, պիտի սկսին ըսել՝ օ՛խ ըլլայ, մի քիչ էլ դուք, իրականութենէն անջատուած, ձեր պղպջակին մէջ ապրող մեծահարուստներդ, «համը ամէք» կեանքի իսկական դժուարութիւններուն:

Հրամեցէք, միացէք մնացեալներու:

Փաստօրէն հրդեհը - իսկական - ընկերվարական է: Անոր առջեւ, ամէն մարդ հաւասար է:

Մարդ է, միայն:

Մ. Հայդուկ Շամլեան

[See Translation](#)



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post

X



Blog H

November 8, 2024 · 🌐

...

Իսրայելի կապակցութեամբ, ԱՄՆի նոր ընտրուած նախագահը, նշոյլ մը անգամ պիտի չհակադրուի այդ երկրի դեկլարութեան որոշումներուն եւ ծրագիրներուն - որոնց հետ համաձայն է աշխարհի բոլոր հրեաներու զանգուածային մեծամասնութիւնը - :

Թրամփի Ամերիկան աւելի յստակ, աւելի միակողմանի, աւելի բուռն եւ անվերապահ կերպով պիտի զօրակցի Իսրայելին:

Միակ հարցականը, դեռ մինչեւ 25 Յունուար ժամանակամիջոցն է:

Որու ընթացքին, գործող նախագահը տակաւին Պայտընն է: Որու վարչակարգը գոնէ որոշ ճիգեր կը կատարէր, ջանալ զսպելու համար Իսրայելը:

Սակայն այդ ուղղութեամբ ալ, արաբական որոշ յոյսեր, անհիմն են...

* * *

Տեղի ունեցած նախագահական ընտրութիւններէն ետք, եւ այդ հիման վրայ, Իսրայելի նկատմամբ ԱՄՆ մեկնող վարչակարգի որոշ «պեմօլ»ները իսկ, հիմա պիտի անհետանան:

Արդարեւ, այդ ուղղութեամբ Պայտընի վարչակարգը «սանձող»ը, իր կուսակցութեան ծայրայեղ ձախակողմեաններու թելն էր:

Այդ նոյն արմատական տարրերուն պատճառով է որ, սակայն, ոչ միայն իշխող կուսակցութիւնը ջախջախիչ պարտութիւն մը կրեց նախագահական ընտրութիւններուն, այլ հիմա խորտակուեցաւ այդ ամբողջ կուսակցութիւնը իսկ:

Օպամայի իշխանութենէն սկսեալ, Տեմոքրաթիք Փարթին՝ հիւանդոտներու կրկեսի, freakshowի վերածելէ ետք, այդ նոյն hurluberlu-ներն են որ Պայտընի թեկնածութիւնը չեղարկեցին եւ Յարիսը տեղաւորեցին իր տեղը: Վերջինիս արգիլելով, ընտրապայքարի ընթացքին իսկ՝ «շեղիլ» այն ուղիէն, զորս պարտադրած էին արդէն՝ Պայտընին: Եւ ահա, արդիւնքը...

Հետեւաբար, մնացած երկու ամիսներու ընթացքին, իր քաղաքական ասպարէզի աւարտին, Պայտընը որեւէ կարիք եւ որեւէ մղում չունի, շարունակել գոհացնելու՝ իր նախագահութիւնը խափանած եւ իր կուսակցութիւնը պայթումի ենթարկած այդ ծայրայեղականները:

* * *

Վերեւ պարզուած տուեալներու լոյսին տակ, ԱՄՆի վարչակարգի փոփոխութեամբ, Իսրայելի պարագային, որեւէ անակընկալի մի սպասեք, նամանաւանդ Իրանի կապակցութեամբ:

Յիշենք պարզապէս որ Թրամփը ինք, ուղղակի, իր նախորդ նախագահութեան ընթացքին, հրահանգեց՝ Իրանի հեղինակաւոր զօրավար Բասեմ Սոլեյման-ի մարմնային ոչնչացումը:

Ամենայն հաւանականութեամբ, վճռական եւ կտրական կերպով, Թրամփին հիմնական եւ առաջնահերթ թիրախը պիտի հանդիսանայ՝ Իրանը:

Ինչ որ լաւ լուր մըն է, Լիբանանի համար:

Քանզի՝ ուղղակի եւ վերջնական, անզուսպ ու անսանձ յարձակումով, Իրանի վարչակարգ մէյ մը որ անէանայ, Հրգպալլան բնականաբար կը վերջանայ:

Եւ արեւը դարձեալ կրնայ ծագիլ Լիբանանի վրայ:

Միջերկրականի անսման արեւը, որուն փայլքը, ջերմութիւնն ու շոյանքը, աշխարհի մէջ ուրիշ որեւէ տեղ չկայ: Կը փնտռես, բայց չես գտներ: Ոչ իսկ նոյն ծովուն եզերքի միւս երկիրներուն մէջ:

Մ. Հայրուկ Շամլեան

See Translation



2 comments 1 share

Like

Comment

Share

All comments

- 

Hripsime Kaloyan

100% ով համաձայն, մանավանդ վերջին պարբերութիւնը:
Հիմա որ համոզվամ եմ որ Արցախը չկա ու չի լինելու, կեանքիս միակ երազը մնացել է տեսնել Երբեմնի Լիբանանս իր համով, հոտով ու եզակիությամբ:

13w

Like

Reply

See translation





Author

Blog H

Hripsime Kaloyan բայց ընկերս, Երբեմնի Լիբանաննիս տեսնելը անկարելիութիւն մըն է... բայց նոյն հոգեվիճակին մէջ եմ, Արցախի կորուստին հետեւանքներուն կապակցութեամբ... իսկ արդէն ՀՀ-ն որեւէ իմաստ չունէր ինձի համար, Երբեք, առանց Արցախին... առաջին մի քանի տարիներէն ետք, երկու օր իսկ չէինք մնար Երեւան, եւ կը մեկնէինք Շուշի...

13w

Like

Reply

See translation





Write a comment...



X




4 comments

Like

Comment

Share

All comments 

4w Like Reply



Blog H

Vahe Kabakian and he was also like his handwriting... nevertheless I published his comments, because he had made the effort to express them... the traces he has made in my text are more annoying... but there was no computer word-processing back then, I have typed my work with an actual dactylo, and I just scanned it as is...

4w Like Reply



Blog H

Այս դասընթացը որ առած էի, կը «պարտադրեր» որ ուսանողը՝ 80 գիրք կարդար: 30 բանաստեղծական հատոր, 30 հատ վեպ, եւ 20 թատերգութիւն: Մենք կը զատէինք, ինչ որ կ'ուզէինք կարդալ:

Եւ ամէն մէկ գիրքին համար, յատուկ ցուցմունքներով, մէկ հատ fiche մը պէտք է որ պատրաստէինք, կէս էջի չափ բայց recto-vero: Եթէ գտնեմ, ատուկք բոլորը ըսքեն պիտի ընեմ եւ հրապարակեմ...

Համալսարան-մամալսարան, այս սիւրճին մէջ, պարապ բաներ էին...
Գրականութեան լաւագոյն ուսուցիչները որ ունեցայ կեանքիս մէջ՝ Տիկին
Եօլանտ Աճեմեանն էր եւ Պարոն Գրիգոր Շահինեանը: Միայն անոնք եւ,
որ ինծի բան մը սորվեցուցին: Եւ այդ պատճառով ալ, իրենց հետ որեւէ
կարգապահական խնդիր չեմ ունեցած: Բացառիկ մարդիկ...

4w Like Reply See translation



Blog H Great work

4w Like Reply



Blog H's Post

Blog H

January 12 at 1:46 PM · 🌐

...

Լոս Անճըլեսի հրդեհներու աղետը ուղղակի ապրող, այդ տարածքին մէջ բնակող մարդիկը, իրենք ալ ինչպէս աշխարհի բոլոր տառապեալները, հիմնականօրէն միևնաեկ են իրենց ողբերգութեան մէջ:

Ինչպէս որ, անհատական կամ հաւաքական առումով՝ արտակարգ ցաւ մը, արտասովոր տագնապ մը ապրող ռեւէ անձ կամ համայնք, Լոս Անճըլեսի զոհերն ալ մեկուսացած են, իրենց անողոր ճակատագրին մէջ:

Դեռ հիմնական երկու հրդեհները կը շարունակեն առաջանալ, բայց արդէն իսկ, նուազ կը խօսուի այս նիւթին մասին, Լոս Անճըլեսի լայնատարած շրջանի բնակիչներուն մասին, իրենց քաղաքներուն մասին:

Նոյնիսկ ԱՄՆի լրատուական կայաններէն, սկսած են հետզհետէ նուազ ժամանակ տրամադրել այս նիւթին, նուազ լուրեր հաղորդել, այս մասին...

* * *

Սկիզբէն սկսեալ, արդէն, այդ անմիջական տարածաշրջանէն դուրս, շատ չէր թիւը անոնց որոնք իսկապէս մտահոգ էին, հարազատ կարեկցութիւն ունէին, մարդկային այս աղետին կապակցութեամբ:

Աշխարհի մնացեալ մարդկանց մէջ, շատերուն համար՝ մասնաւոր հոգ մը չէ, տեղի ունեցածը:

Ոմանք, իրենց տարտերը ունի: Սիրտ կամ ժամանակ չէ մնացած, դեռ զգալու համար ուրիշին ցաւը, եւս:

Ոմանք, նոյն աստիճանի ողբերգութեան մէջ չեն, երբեք չեն եղած: Սակայն բնոյթով՝ անհոգ են: Անզգամ ու անտարբեր: Մարդկութենէն անջատուած:

Բայց նաեւ կան ոմանք – իրօք անբնական քանակով – որոնք կարծես թէ... հրճուանք կը զգան, տեսնելով ԱՄՆի այդ iconic, լայնատարած աւանին աւերումը, եւ այդտեղի բնակիչներու կեանքերուն խորտակումը:

Քաղաքական անվայել մօտեցումներով, անտեղի բաղդատականներով - նաեւ ոմանք նոյնիսկ՝ անձնական նախանձի՝ պատճառով -, կարծես թէ ուրախութեան պէս բան մը կը զգան, դիտելով այդ հրէշային բոցերուն բացարձակ չարութիւնը, դժոխային առաջընթացը՝ անցեալին մարդոց համար ալ դրախտավայր հանդիսացած, այդ իսկապէս հոյակապ, եւ բացառիկ, շշմեցուցիչ տարողութեամբ՝ գեղեցիկ, Բնութեան ընծայած իւրայատուկ տարածքներուն վրայ:

* * *

Ուրեմն՝ ուժ եւ համբերանք, Լոս Անճըլեսի աղետեալ բնակիչներ - հայ եւ օտար - :

Դեռ հրդեհները չեն մարած, մինչ անոնց շփոթումէն ետք իսկ, դեռ տարիներո՛վ պիտի տեւեն այս Աղետին հետեւանքները:

Մինչ, գալիք հրդեհներու հաւանականութիւնը կը մնայ բարձր...

«Մեծ Զատ»ը կը սպասուէր, ծայրագոյն երկրաշարժը: Բայց եկորւ տես որ՝ կրակներն են, որ հարուածեցին...

* * *

Անշուշտ բազմաթիւ անգամներ վայելած ենք այդ տարածաշրջանը:

Աշխարհի այդ մի քանի վայրերէն մէկն է, զորս շատ կը սիրեմ, բայց չեմ ուզած այդտեղ ապրիլ:

Մինչդեռ առիթը ունեցած էի այդտեղ տեղափոխուելու, երբ որ երիտասարդ տարիքիս, դուրս եկայ Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժոխքէն:

Անկէ ետք ալ, մինչեւ որոշ պահ մը, հնարաւոր էր որ երթամ եւ ապրիմ այդտեղ, սակայն ինծի համար՝ ճիշդ տեղը չէր:

Ասիկա կ'ըսեմ, ամենայն յարգանքով, սիրով - եւ chronic կարօտով - այն ընտանեկան հարազատներուս (եւ հեռաւոր անցեալի լաւ ընկերներու) նկատմամբ, որոնք որոշեցին իրենց կեանքերը այդտեղ տեղափոխել ու տեղաւորել:

* * *

Բանաստեղծութիւններու երկրորդ գիրքիս մէջ, Լոս Անճըլեսը նշած եմ:

Ահա, այսպէս՝

<https://haytougchamliahnhome.wordpress.com/.../01/l.a-2.pdf>

Հայդուկ Շամլեան

See Translation

Like

Comment

Share

Write a comment...

Blog H's Post

Blog H

January 9 at 10:19 AM · 🌐

...

Լոս Անճըլեսի հրդեհներուն նիւթով`
Իսկապէս յարգանք, հիացմո՛ւնք կը զգաս` ԱՄՆի նկատմամբ:
Եթէ նոյնանամ, նոյն տեսակի եւ տարողութեամբ աղետ մը տեղի ունենար աշխարհի շատ մը այլ երկիրներուն մէջ, այդքան հոծ բնակչութեամբ շրջանի մը մէջ, մարդկային կորուստները անհամեմատօրէն աւելի շատ կ'ըլլային: Նաեւ նիւթական վնասները:
Բացառիկ երկիր մըն է, բացառիկ ժողովուրդ մը:
* * *
Այնուհանդերձ, այս Աղետը խուսափելի էր: Տեղի կ'ունենայ, Զալիֆօրնիայի` աղանդային կրօնքի, քանդիչ վարդապետութեան վերածուած, եւ այդպէս քաղաքականութեան ոլորտը բռնագրաւած` որոշ հիւանդագին ու մոլեգին գափարաբանութեան մը պատճառով:
* * *
Ահա մի քանի տուեալներ`
. ձուկի, ձկնիկի տեսակի մը սիրոյն – որ «endangered species» իսկ չէ - , հսկայական բնական ջուրի հոսանքներու հուները փոխած է, նահանգային կառավարութիւնը, զանոնք դուս բերելով անտառներուն մէջէն, որպէսզի աւելի ուղղակի – եւ ձկնիկին համար աւելի ապահով ձեւով- հոսին ովկիանոսին մէջ:
. հրշէջներու ծառայութիւնները ենթարկած են «DEI» կոչուած այդ խելագարութեան: Գործի կ'առնուին, առաջնահերթութեան կարգով, նախ` կիները, միասեռականները, ոչ-ճերմակամորթները, եւայլն, ապա միայն, եթէ տեղ մնաց` սովորական տղամարդիկը: Ատակութեան, կարողութեան տարբերութիւնները բնաւ նկատի չեն առնուիր, Օրէնքով պարտադրուած այս գտումին մէջ: Հրշէջութեան մասին կը խօսինք...
Իսկ Քովիտի վախտ, տուեալ նահանգը` գործէն դուրս վտարեց հրշէջները (ինչպէս նաեւ ոստիկաններ, եւ այլ, հանրութեան կենսական ծառայութիւններ մատակարարող պաշտօնեաներ), որովհետեւ անոնք մերժեցին սրսկուիլ պատուաստով - զորս հիմա գիտենք, որ անօգուտ էր - :
. Նահանգին կառավարիչը, ոչ միայն որեւէ նոր ջրամբար չէ կառուցած, այլ... խորտակած է, անհետացուցած է` բազմաթիւ ջրամբարներ:
. Տարածուն եւ խիտ անտառները թողած են անխնամ: Եւ այդտեղ չեն կիրառած հրդեհները կանխելու համար անհրաժեշտ միջոցներ - ներառեալ տեղ առ տեղ ծառերու վերացում, որպէսզի երբ որ հրդեհը սկսի, կարելի ըլլայ զայն մեկուսացնել, պաշարել, եւ ըստ այն կռուիլ բոցերուն դէմ - :
Արմատական գաղափարամոլութեան արդիւնք հանդիսացող այս ՄԱՐԴԱՏԵԱՅ ապուշութիւններու այս ցանկը, լրացուցիչ չէ:
* * *
Եւ դեռ չխօսեցանք` զարհուրելի հարկերու մասին, տուներու գիներուն մասին, կեանքի ահաւոր սղութեան մասին, սահմանը անօրէն կերպով անցած ոճրագործներուն մասին (անշուշտ թէ ոչ բոլոր փախստականները, բայց արդէն եթէ մէկ հատ մը միայն այդպէս երկիրդ մտնէ եւ քու ընտանիքիդ անդամը բռնաբարէ, սպանէ, ի՞նչ կը մտածես... բայց մէկ հատէն շա՛տ աւելի են... ուղղակի նոր gang-եր կազմած են, ԱՄՆ հողին վրայ... եւ դեռ մինչեւ այսօր, սահմանը բաց է... եկո՛ղը, կը մտնէ...)
Միջին դասակարգը ուղղակի մորթած են, այդտեղ: Եւ կը շարունակեն զայն բզկտել:
* * *
Դեհ հիմա ուրեմն, tree-huggerները թող երթան եւ գրկեն բազմահազար ծառերու մոխիրները... Զանի որ ատիկա աւելի իմաստ ունի իրենց համար, քան թէ մարդոց կեանքերը:
Զալիֆօրնիան, մինչեւ 80ական թուականներու սկիզբը, «Ամերիկեան Երազ»ի լաւագոյն վայրն էր:
Դարձուցին` Ամերիկեան Մղձաւանջը:
Այս հրդեհները թող wake-up call մը հանդիսանան:
Դժոխային հրդեհները, այդ նախկին դրախտավայրին մէջ...
* * *
Եթէ իշխանաւորները հանգիստ թողնեն բնակչութիւնը, անպայման որ կը վերականգի Զալիֆօրնիան:
Եւ մենք ալ յաւելեալ հաճոյքով կ'այցելենք մեր այդտեղի սիրելիները, հարազատները: Ա յլեւս միմիայն իրենց տեսնելու չէ որ կ'երթանք, այլ նաեւ, քիչ մըն ալ իրենց ապրած քաղաքն ու նահանգը վայելելու համար...
Մ. Հայդուկ Շամլեան

See Translation

Like

Comment

Share

Write a comment...

Blog H's Post

×



Blog H

November 10, 2024 · 🌐

...

Լուսովիկ-ի յիշատակին / Մաս IV եւ աւարտ

See Translation



HAYTOUGCHAMLIAN.HOME.BLOG

Լուսովիկ-ի յիշատակին / Մաս IV եւ աւարտ

[Մաս I-ը]... [Մաս II]... [Մաս III] Տասնըիինգ յաջորդական տարիներ, ընտանեկան ծրագիր մը...



2 comments 4 shares

- Like
- Comment
- Share

All comments



Սիրանուշ Մելիքսեթյան

Ճիշտ եք ասում, որ արցախցիները չէին գիտակցում,թե իրենք լավ են ապրում (մեր չափանիշներով): Շատերը դա հասկացան, երբ եկան ԶԶ:Տեսան մեր պայմանները, աշխատավարձը (նույն աշխատանքի համար Արցախում իրենք մոտավորապես եռակի անգամ ավելի էին վարձատրվում) և հիասթափված լքեցին ու շարունակում են լքել Զայաստանը: Օդի մեջ չեմ ասում. Տավուշի մարզի գյուղերից մեկում մի արցախցի ընտանիքի տուն էին առաջարկել, չէին հավանել, հրաժարվել էին: Բայց այդ գյուղի բնիկներից շատերը կերազեին այդպիսի տուն ունենալ: Շատ տխուր է: Կարող է չհավատաք, բայց և՛ ես, և՛ շատերը Զայաստանում այսպես ենք մտածում. թո՛ղ արցախցին ավելի լավ ապրեր, միայն թե Արցախը լիներ,իսկ մնացած հարցերը ժամանակի ընթացքում կլուծվեին:

12w Like Reply See translation



✍️ Author

Blog H

Սիրանուշ Մելիքսեթյան բարդ նիւթ է...

իրաւացի պատճառ չկար, որ – համեմատաբար – Արցախի մէջ բնակող հայերը – մի քիչ – աւելի լաւ ապրէին, քան ԶԶի շատ մը գիւղերու մէջ

իսկ նկատի ունենալով որ ԶԶի քաղաքական դեկլարութիւնը, արցախցիներու ձեռքն էր, այդ երեւոյթը դարձած էր արդէն՝ ծանր խնդիր մը...

բայց տարօրինակը այն է որ, հակառակ որ Արցախը առանձնաշնորհումներ կը վայելէր, այդտեղի բնակչութիւնն ալ, առաջին պատեհութեամբ, երկիրը կը լքեր, կը մեկնէր... նուազագոյնը՝ տեղափոխուելու համար Երեւան եւ շրջակայքը...

անսահման է նիւթը, տարիներ անցան արդէն Արցախի վերաբերող Աղէտի հանգրուանէն, եւ դեռ որեւէ լուրջ քննարկում, խորհրդածութիւն, վերլուծումներ չկան, այդ մասին

միմիայն՝ ամենացած մակարդակի, ամենանուազ բովանդակութեամբ, անիմաստ ու անիեթեթ, ներքաղաքական բախումներ

ի դէպ, Բերձորի կենսական ճանապարհը փակուելէն ետք, ամիսներ շարունակ, նոյն այդ վիճակն էր նաեւ՝ մնացորդ Արցախին մէջ...

յստակ կերպով չբացատրեցի՞ն իսկ այդտեղ մնացած հայերուն, թէ ի՞նչ էին իրենց – իրապաշտ – այլընտրանքները... մինչեւ հիմա իսկ, իրենց չեն բացատրած, այդ...

մակերեսային, մակերեսային, ահաւոր մակերեսային մակարդակի մը վրայ է, ամեն բան...

12w Like Reply See translation



Write a comment...





Blog H's Post



Blog H

November 8, 2024 · 🌐



Կարդացի որ Լիբանանի մէջ զարկած են՝ Սայտան:

Այդ շատ գեղեցիկ քաղաքին մէջ է որ՝ Վարուժան Խօրեղբայրս (իր նախնական ընտանիքին միմիակ անդամը որ տակաւին մեր հետն է, այս աշխարհին էջ, եւ այդպէս ալ թող մնայ դեռ երկար ժամանակ), իր առաջին դեղարանը բացած է: Այժմ հանգուցեալ եղբայրներուն զօրակցութեամբ:

Երկրորդն էր՝ Պուրճ-Յամշուտինը, Մատոնա փողոց:

cf. «Դեղագործին աշկերտը»

<https://haytougchamlan.home.blog/դեղագործին-աշկերտը-կամ-պուրճ-համու/>

Մ. Հայրուկ Շամլեան

[See Translation](#)



HAYTOUGCHAMLIAN.HOME.BLOG

Դեղագործին Աշկերտը (կամ «Պուրճ-Յամուտ 1979»...)

14 տարեկան էի, երբ որ գրեցի՝ ներքեւ տեղադրուած դպրոցական շարադրութիւններու շար...



2 shares



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

November 8, 2024 · 🌐



Կարելի էր պատկերացնել որ պազարը խլի պիտի ըլլար հետեւեալը՝

. Թրամփը՝ Ուքրանիոյ արեւելեան տարածքներէն որոշ շերտ մը կը շնորհէ Փուլինին, եւ այդտեղ վերջ կը գտնէ այդ պատերազմը

. Փուլինը կը լքէ պաղեստինցիները իրենց աղէտալի ճակատագրին, եւ այդտեղ ալ վերջ կը գտնէ այդ բախումը:

Սակայն այս նոր տուեալը, որ՝ Իրանը փորձած է Թրամփը սպաննել, վերոնշեալ սակարկութիւնը հարցման նշանի մը տակ կը տեղադրէ:

Արդարեւ, անկարելի է որ Իրանի այդ մահափորձին ձեռնարկէր, առանց Ռուսաստանի կանաչ լոյսին:

Հետեւաբար, այժմ կարելիութիւն մըն է որ Թրամփը չգոհանայ միայն Իրանի վարչակարգը անհետացնելով:

Այլ, իր դէմ կատարուած մահափորձին գինը, կը վճարէ նաեւ Փուլինը:

Յիշեցնեմ որ ճորճ Վ Պուշը՝ Իրաքի երկրորդ պատերազմին ձեռնարկեց – եւ այդ ուղիով վերջնականապէս խորտակուեցան այդ երկիրը եւ անոր ղեկավար Սատտամը -, ըստ շատերու, քանի որ ան չէր ներած Սատտամի մահափորձը՝ իր հօր դէմ:

Իսկ ճորճ Վ Պուշը, Թրամփին բաղդատած, աղանի մըն է...

Մ. Հայրուկ Շամլեան

[See Translation](#)



1 share



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

January 15 at 9:10 AM · 🌐



ՀՀ Արտաքին Գործոց նախարարը բան մը ստորագրեց՝ ԱՄՆ Արտգործ նախարարին հետ - որուն այդ պաշտօնը վերջ պիտի գտնէ մի քանի օրէն... (թեպետ այս պարագային, նոր վարչակարգով իրեն փոխարինողը, աւելի թունդ հակառուս մըն է, քանզի Քասթրօյի յեղափոխութեան վախտ Ֆլօրիտա ապաստանած Cuban համայնքի զաւակ է) :

Երանի թէ բովանդակալից բան մը հանդիսանար այդ արարողութիւնը: Դժբախտաբար, ձեւակերպութիւն մըն է միայն:

Եթէ ԱՄՆ-ն վստահ ըլլայ որ ՀՀ-ն, Ուքրանիոյ պէս, պատրաստ է կռուելու ռուս զինուորների դէմ, այդ պարագային է որ շատ աւելի իսկական, շօշափելի եւ արդիւնաւետ կը դառնայ՝ ՀՀ-ԱՄՆ ռազմական համագործակցութիւնը:

Սակայն ՀՀ-ն վստահելի չէ:

Որեւէ այլ պետութեան համար:

Իքի տիկտէն աւարա...

Մ. Հայրուկ Շամլեան

See Translation



2 comments



Like



Comment



Share

Most relevant



Ժան Հ.

Վարդան Օսկանեանի անդրադարձը այս գծով, շատ շահեկան վերլուծում է այս աքթին:

<https://www.facebook.com/share/19iFW1YcXG/?mibextid=xfxF2i>

3w Like Reply See translation Edited



Author

Blog H

Ժան Հ. ընկերս... հաւատա որ չեմ ուզեր միշտ այս «հակասողի» դիրքին վրայ ըլլալ... ոչ ալ բաներ ըսել, որոնք կրնան Փաշինյանի ջրաղացին ջուր բերել... բայց ես հիմա ինչպէ՛ս լուրջի առնեմ Վարդան Օսկանեանի մը կարծիքները, արդէն՝ ընդհանրապէս, եւ ի մասնաւորի՝ երբ որ Նիւթը ՀՀ-ԱՄՆ սիրաբանութիւններու մասին է. դեռ աւելցնելով որ այս մարդը, տասը տարիներ, Արտաքին Գործոց նախարարն էր, եւ Ք*Ք մըն ալ չկրցաւ ընել, Արցախի առնչութեամբ... առաւել՝ իր AIMը եւ իր CivilNetը... ռամկավարութիւնը... եւայլ., եւայլն. - եւ հիմա մեջտեղ ելած է, եւ կ'ըսէ կոր որ ամէն բանի լուծումները ինք ունի... [այո, գիտեմ որ Հալէպէն է, բայց ամէն Հալէպցի անպայման լաւը չէ... ոչ ալ ամէն Լիբանանցի անշուշտ... 😊]

3w Like Reply See translation



Write a comment...



Blog H's Post

×



Blog H

December 10, 2024 · 🌐

...

ՀՀ-ն, կամ պիտի վերադառնայ՝ դաւաճան Ռուսաստանի լուծին տակ, կամ՝ պիտի իյնայ ցեղասպան Թուրքիոյ գիրկը:

Այս դաժան ճակատագրին դատապարտուած է, ափսոս, այդ մնացորդ երկիրը:
* * *

Նոյնը չէ սակայն պարագան, Լիբանանին:

ԱՄՆ-ի եւ Իսրայելի միացեալ ծրագիրը, իրենց ուղղակի, անմիջական ազդեցութեան տակ պահել է՝ այժմ Իրանէն, Սուրիայէն, Ռուսաստանէն ազատագրուած, Լիբանանը:

Թուրքիան կը վարձատրուի, այո, կը ստանայ շատ բաներ՝ Սուրիոյ մէջ:

Սակայն Լիբանանը, իրենք իրենց կը պահեն ու կը վերապահեն ԱՄՆ/Իսրայել դաշինքը:

Խի՞:

Գոնէ հետեւեալ երկու հիմնական պատճառներով՝

1. Իսրայելը ուղղակի իր սահմանին վրայ չի կրնար ընդունիլ Թուրքիան: Որու հետ իր համագործակցութիւնը զուտ ռազմավարական է, բացառապէս առարկայական է: Թուրքիոյ նկատմամբ Իսրայելը չունի նշոյլ մը իսկ քաղաքական վստահութիւն, որպէսզի զայն իր հարեւանը դարձնէ:

Իսրայելի համար, Իրանը եւ Թուրքիան նոյն տեսակի եւ բնոյթի վտանգներ են, այդ տարածաշրջանին մէջ:

Իսրայելը, Իրանէ հազիւ ազատեցաւ: Հիմա պիտի չենթարկուի, իր դրան շեմին, անոր համագործ թթմանիզմի վտանգին: (Ի դէպ, այդ երկիրը ղեկավարող արդի սուլթաններու օսմանադարձ տենչանքներէն զատ, Թուրքիոյ ժողովուրդը խորապէս կ'ատէ հրեաները: «Mein Kempf»ը, Թուրքիոյ մէջ մնայուն best-seller մըն է...)

Դեռ աւելի մասնայատուկ կերպով՝ Թուրքիան, Համասին շատ օգնած է: Թոյլ տալով որ Թուրքիան զօրեղ գործօն մը դառնայ Լիբանանի մէջ, Իսրայելը վերակենդանացման պատեհութիւն մը պիտի ընծայէ Համասին, կամ նոր գոյացման առիթ մը, այլ անունով, նոյնանման կազմակերպութեան մը:

2. Սուրիոյ մէջ, ԱՄՆ-ն ուղղակի կը դաշնակցի՝ քիւրտերու որոշ ցեղախումբերու հետ:

Յատկապէս, ի դէմ՝ ԱՄՆատեաց ճիհատիսթներուն: Որոնք հազարներով, այս պահին իսկ, բանտերու մէջ են Սուրիոյ հիւսիսը, քիւրտերուն հսկողութեան ներքոյ: Եւ այդ ճիհատիսթները այժմ, նախկին Սուրիոյ տարածքին առաջնահերթ մտահոգութիւն մըն են ԱՄՆի համար, հիմա որ Իրանը եւ Ռուսաստանը անհետացան այդտեղէն:

Իսկ այս քիւրտերուն մահացու թշնամին է՝ Թուրքիան: Որու մղձաւանջը, այդտեղ քիւրտիսթանի մը հիմնադրութիւնն է... Որու հնարաւորութիւնը քիչ մը աւելի շեշտակի դարձաւ, հիմա որ Ասսատ, պիթթի:

Այո, ԱՄՆ-ն կրնայ հեշտօրէն լքել այդ քիւրտերը՝ Թուրքիոյ: Բայց ԱՄՆը պետական շահը կը պահանջէ, որ այդպէս չընէ:

Քանզի սիւննիթ ճիհատիսթներուն տերը, Թուրքիան է: Բան մը որ ամէն մարդ գիտէ, բայց մինչեւ այն ատեն որ Թուրքիան - շատ - օգտակար է իրենց համար, արեւմտեան պետութիւնները եւ Իսրայելը պիտի շարունակեն անոր հետ դաշնակցիլ: Մինչեւ, որոշ կարմիր գիծեր... որոշ սահմաններ... Որոնց կարգին են՝ Լիբանանի հիւսիսային եւ արեւելեան սահմանները:
* * *

Ուրեմն եալլա՛, եա Լուպնէն: Շըտ հ'հալաք:

Մայր Հայաստանը, չեղաւ:

Գոնէ Մայր Լիբանանով մը մխիթարուինք...

Մ. Հայդուկ Շամլեան

See Translation



1 share

Like

Comment

Share





X

3 comments 2 shares

Share

Blog H



Blog H's Post

×

Blog H

shared a memory.

January 7 · 🌐

...

Մեռելոց... չեմ գիտեր, տարուան ո՞րմէկ օրը՝ Մեռելոց չէ...

See Translation

1 Year Ago

See your memories

Blog H

January 7, 2024 · 🌐

Հրապարակ թերթին մէջ կը կարդամ այս տողերը՝
«Որևէ մեկը արցախցու մտքով փորձե՞լ է սավառնել՝ Մեռելոց է, բայց քանի հարյուր հազարավորները չեն կարող գնալ իրենց գերեզմաններին»:
* * *
Իսկ արցախցին եւ հայաստանցին երբեւիցէ փորձե՞լ են մեր մտքով սաւառնել...
Մենք, Աւանդական Սփիւռքի միլիոնաւոր հայերս, չենք գիտեր իսկ թէ, անծայրածիր անապատին մէջ, ճիշդ ո՞ւր մեռած են մեր հայրերն ու մայրերը, մեծ-հայրերն ու մեծ-մայրերը, նախորդ սերունդների մեր բազմաթիւ հարազատները:
Որեւէ գերեզման իսկ չունին, անասելի պայմաններու մէջ սպաննուած, մեր այդ բիւրաւոր նահատակները:
Եւ հարիւր տարիներէ աւելի երկար ժամանակ, ամէն տարի մի քանի անգամ, Մեռելոց կ'ոգեկոչենք:
Մեր ուրուականների անյայտ շիրիմներին վրայ:
Հայրուկ Շամլեան
See Translation

Like

Comment

Write a comment...



Blog H's Post



Blog H

December 7, 2024 · 🌐



Միջազգային կացութեան կապակցութեամբ, տեղ մը, մէկը արձագանգես որ՝ երանի թէ իմ գրածներուս չափ պարզ ըլլար ամէն բան...

* * *

Well.. երբեմն՝ այդպէս է: Շատ ալ պարզ է:

Անշուշտ թէ կրնաս պարզ բան մը, շատ բարդ կերպով ըսել: Դիմացինդ – կամ դուն քեզ – տպաւորելու համար...

Բայց խորքին մէջ, եթէ քիչ մը իսկ մտածել եւ խօսիլ/գրել գիտես, շատ աւելի դիւրին ու հեշտ է՝ բարդ ու դարձդարձիք կերպով ներկայացնել սիւս մը, քան թէ՝ պարզօրէն, յստակ եւ հասկնալի կերպով:

Բարդ կերպով գրելը նոյնիսկ միջոց մըն է ծածկելու ըսածիդ խորքային թերութիւնները, սխալները:

* * *

Ես ծնած եմ Լիբանան - մանկութիւնս եւ պատանեկութիւնս ապրելով այդտեղ, քաղաքացիական պատերազմին մէջ -, բազմիցս եղած եմ Սուրիոյ մէջ - մէկ ծայրէն միւսը - , ապրած եմ այդտեղ ամիսներով, քառասուններկու տարիներէ ի վեր կ'ապրիմ Կանադայում, երեսուն-հինգ տարիներու իրաւաբան եմ, քսան-երկու անգամ այցելած եմ Հայաստանն ու Արցախը, ամէն անգամ՝ մէկ ամիսէն աւելի մնալով - եւ գործելով – այդտեղ

Նաեւ, մինչեւ օրս, վերոնշեալ երկիրներէն զատ, այցելած եմ նուազագոյնը քսան այլ երկիրներ:

Այդ ամէնուն հիման վրայ է, որ ի վիճակի եմ այսքան «պարզ» կերպով բացատրել կացութիւնը:

Մինչ կարող եմ, բառացիօրէն, լման գիրք մը գրել, ամէն մէկ գրառումովս պարզաբանուած միեւնոյն բանը ասելու համար...

Մ. Հայրուկ Շամլեան

Յ.Գ. Btw, ասպարեզիս մէջ ալ, հիմնական մարիֆէթներէս – եւ յաջողութեանս գաղտնիքներէն մէկը - եղած է՝ պարզացնել:

Դատական գործընթացներու մէջ, պարապ-պարապ բաներ չընել, այլ կեդրոնանալ Էականին վրայ:

Վերջին դատս որ շահեցայ, դատավարութիւնը տեւեց հինգ օր: Չորս օրը, օգտագործեց դիմացի փաստաբանը: Ես՝ մէկ օր: Եւ յաճախորդս շահեցաւ: (Բոլոր դատերս չեմ շահած անշուշտ, յաճախ պատահած է որ, հակառակ բոլոր ջանքերուս, դժբախտաբար յաճախորդս պարտուի. բայց այդ մէկ օրինակը որ տուի, նշանակալից է:)

Իսկ համաձայնագիրներու պարագային, հոն ուր միւս փաստաբանները երեսուն Էջոց փաստաթուղթ կը պատրաստեն, ես՝ չորս-հինգ Էջերու մէջ կը զետեղեմ, նուազագոյնը՝ նոյն բանը:

Մինչ յաճախ այդ երկարապատո՛ւն փաստաթուղթերը, իրենց աւելորդաբանութիւններուն պատճառով, օրինապէս շատ աւելի խոցելի են, քան եթէ մի քանի Էջերու մէջ խտացուի անոնց կարեւոր բոխանդակութիւնը:

. Շատ խօսիլ, չի նշանակեր լաւ խօսիլ:

Որոշ լռութիւններ աւելի բովանդակալից են, քան թէ աւելորդ խօսքերը, աղմուկը:

. Ի դէպ, հրատարակուած բանաստեղծութիւններս ալ, minimaliste են: Աւելի ֆախֆախալըները կամ պատռած թափած եմ, կամ ալ մէկդի նետած եմ:

See Translation



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 7, 2024 · 🌐



Միջին Արեւելքի մէջ, հայերու մեծամասնութիւնը, միշտ՝ պաշտօնական իշխանութեան հետ է: Ինքնապահպանման բնագոյ մըն է: Որ դժբախտաբար յաճախ կը տանի աղետալի սխալներու: Իսկ մնացեալները, կը մնան լուռ...

. Հնարաւոր բացատրութիւն մըն այն է որ, Յեղասպանութեան վերապրողներ ենք: Ի մասնաւորի այդ տարածաշրջանին մէջ...

. Ի դէպ, ՀՀ տեղափոխուած Արեւելքի հայերը, քանի որ այդտեղ չկայ բաւարար ժողովրդավարութիւն, պահած են այդ նոյն բնագոյը:

Ով որ ալ ըլլայ երկրին պետը, օրուայ Ռայիսը, մէկ ա, իրենք՝ անոր կը հնազանդին: Եւ կը յարմարին որեւէ վիճակի:

. Նոյնիսկ մեզմէ ոմանք, երբ որ կը տեղափոխուին՝ արեւմտեան երկիրներ, կը պահեն իրենց այդ նոյն բնագոյային կեցուածքը:

Մնացեալներս սակայն, որոշ ժամանակէ մը ետք, վերջապէս կ'ազատագրուինք...

Իսկ մեր զաւակները արդէն, նաեւ այս գետնի վրայ՝ լրիւ ուրիշ են, փառք Աստուծոյ:

Հայդուկ Շամլեան

See Translation



1 comment



Like



Comment



Share

Most relevant



Harout G. Assarian

Այս ամէն ինչի պատճառն այն է, որ ոչ մէկ երկրի հաւատարմութիւն չունինք ու այդ երկրի իսկական քաղաքացին չենք դառնար ու ամէն տեղ մենք մեր նեղ շահերն ու էջը առաջ կը քշենք: Իսկ ամենավատն այն է, որ մենք նոյնիսկ մեր էջուն չենք հաւատար:

8w

Like

Reply

See translation



Write a comment...



Blog H's Post

Blog H

December 2, 2024 · 🌐

Որոշ հայեր հիմա կ'ըսեն կոր որ՝ ԶՅի պետութիւնը պետք է որ հասնի Զալէպի հայերուն օգնութեան:

Այս կեցուածքը հիմնուած է այն ըմբռնողութեան վրայ, որ ԶՅ-ի պետութիւնը Զայ Ազգի պետութիւնն է, եւ ոչ թէ, բացառապէս միայն՝ ԶՅ քաղաքացիներու պետութիւնը:

Եւ այդ, ԶՅ Անկախութեան Զոչակագիրն ալ, այդպէս կ'ըսէ:

Շատ բարի...

* * *

Այդ հիման վրայ, ուրեմն հիմա մէկը ինծի թող յայտնէ թէ, Արցախի վերջին պատերազմին՝ ԶՅ քաղաքացի չհանդիսացող, քանի՞ հատ հայեր, մասնակցեցան կռիւներուն:

Կամ նոյնիսկ, ոչ իսկ կռիւներուն:

ԶՅի ոչ-քաղաքացի, հայ ծագումով քանի՞ հոգի, գոնէ շալկուեցան եւ գացին ԶՅ, ջանալ, գետնի վրայ, որեւէ ձեւով մասնակցելու վերոյիշեալ պատերազմի ջանքերուն:

Եթէ կան ոմանք որոնք ուզեցին երթալ, բայց ԶՅ կառավարութիւնը իրենց արգիլեց որ երթան, լաւ, այդ - երեւակայական - թիւն ալ անելուցէք, եալլա: Զըլ շի պէլէշ, քաթթը՛ր մըննու...

Յետոյ հաճիս հաշուեցէք թէ այդ բոլոր սփիւռքահայերուն գումարուած թիւը, տոկոսային ի՞նչ համեմատութիւն կը կազմէ, Սփիւռքի հայերու ընդհանուր քանակին վրայ:

Ամենալա՛յն երեւակայութեամբ՝ եթէ 1%ի (մէկ տոկոս) կարենաք հասցնել այդ ազգային հաշիւը, ուալլա, պրա՛յօ կ'ըսեմ... քանի որ այդքանը հնարելը, մարիֆէթ կ'ուզէ...

* * *

Զետեւաբար, վերոյիշեալ Անկախութեան Զոչակագիրն ալ, մեր ներազգային պայքարի Երկաթե Շերեփն է:

Աւանդական Սփիւռքի՝ 1%ին ձեռքը:

Եւ այդ ալ՝ դատարկ կաթսայի մը առջեւը: Ուր եթէ, երբեւիցէ, հարիսայի հետքեր կային, այդքանը իսկ՝ առանց միսի էր:

Մ. Զայդուկ Շամլեան

Յ.Գ. 2020ին որդեկորոյս հայր դարձած Գեղամ Նազարյանը, որ դուրս եկաւ Զոչարյան-ԶՅԴ [ԶՅիԴաշնակներ] խորհրդարանական դաշինքէն, իրաւունք ունի: Ժամանակի ընթացքին, շա՛տ բան հասկցաւ, մարդը... Տարուսը՝ այն լաւ, հարազատ հայորդիներուն, որոնք դեռ չեն կրնար կոր տեսնել Իրականութիւնը: Զանի որ... cf. առաջին քօմենթ

See Translation

1 comment 1 share

Like

Comment

Share

Most relevant

Author

Blog H

<https://www.youtube.com/watch?v=PWSx0bBiNIs>

YOUTUBE.COM

Jack Nicholson - You can't handle the truth

9w

Like

Reply

Write a comment...



Blog H's Post



Blog H

December 9, 2024 · 🌐



Ուշադրութեան արժանի, լուրջ լուրերուն ընդմէջէն, շատ յստակ է ամէն բան: Ասկէ աւելի բացայայտ կերպով չեն կրնար յայտնել, բացատրել՝ անմիջականօրէն գալիքը... Փոքր ճիգ մը կը մնայ միայն, հասկնալու համար թէ ինչ կ'ըսեն կոր...

Հիմա որ Հրգպալան եւ Ասատի Սուրիան վերջացան, եւ քանի որ Իրանը չպատասխանեց Իսրայէլի ցարդ վերջին յարձակումին, այն պատճառը - կամ պատրուակը - որու հիման վրայ, շուտով, պիտի ոչնչացնեն Նաեւ Իրանի վարչակարգը՝ անոր հիւլէական ծրագիրն է:

Նոյնիսկ եթէ սարսափահար այաթօլլաները յայտնեն որ չէ՛, իրենք արդէն անկէ վազ անցած են, արեւմտեան պետութիւնները այլեւս պիտի չհաւատան այդ յայտարարութիւններուն: Եւ ժամանակի մէջ այս բացառիկ առիթը, յարմար ու կատարեալ պատեհութիւնը, պիտի չփախցնեն: Այս անգամ գործը անաւարտ պիտի չթողնեն, լման պիտի վերջացնեն:

Coup de grâceը տեղի կ'ունենայ Իսրայէլի եւ ԱՄՆի օդային ռմբակոծումներով, միասնաբար: Ժամանակ չեն կորսնցներ, եւրոպական պետութիւններն ալ միացնելու համար ռազմական գործողութեան:

Իսկ խեղճուկ Ռուսաստանին, տախմըշ տուող չէ մնացած արդէն:

Մ. Հայրուկ Շամլեան

Յ.Գ. Զոնֆիւսիւսական իմաստութեամբ, Չինաստանը շա՛տ զգուշ մնաց, այս ամէնուն մէջ: Բայց ատիկա գայն չի փրկեր: Միայն թէ, կ'ուշացնէ այն պահը երբ այդ թուղթէ վագրն ալ պիտի մատնուի Ռուսաստանի վիճակին: Իր կարգն ալ կու գայ...

See Translation

3 comments



Like



Comment



Share

All comments



Սիրանուշ Մելիքսեթյան

Մեծ տերութիւններն իրենց << մեծ>> գործերի արդյունքը թո՛ղ ճաշակեն: Ինձ անհանգստացնում է մեր ժողովրդի վիճակը ներսում և դրսում:

8w Like Reply See translation



Sanan Db

Իսկ եթէ հակառակը ըլլայ ու ԱՄՆ-ի ու Իսրայէլի վերջը գայ Նոյն ինքը Չինաստանի կողմէ: Անոր հաւանականութիւնը ի՞նչ է:

8w Like Reply See translation



Author

Blog H

Sanan Db անկարելի է, Սանան. ոչ թէ զգացական է ըսածդ, այլ մի՛այն, բացառապէս, զգացական է. ամենաբացարձակ աստիճանի wishful thinking է. այդպէս մտածելու համար, պէտք է որ իսկապէս չտեսնել թէ ուղղակի ինչ տեղի կ'ունենայ կոր, մի քանի տարիներէ ի վեր... մէկ հատ մտիկ... See more

8w Like Reply See translation



Write a comment...





X



December 21, 2024 · 🌐



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

January 4 · 🌐



Ուրեմն այսօր ալ ԶԶի մէջ Փաշինյանը ձերբակալեց բանակի զօրավար մը, որ պահ մը, բաներ մը կը խօսէր Փաշինյանին դէմ:

Ռուսաստանի խայտառակութիւնը, փաստօրէն, սահման չունի:

Թէ որ Փութինը կը պարտուի կոր՝ Ուքրանիայի, Պաղեստինի Լիբանանի, Սուրիայի եւ Իրանի մէջ, դա կարելի է բացատրել այն իրողութեամբ որ այդ բոլոր տարածքներուն մէջ, իր դէմ կը գործեն արտաքին, թշնամի, ՌԱԶՄԱԿԱՆ ուժեր: Չէնքեր, բառին տառացի - եւ ամենասոսկալի - իմաստով: Բայց... ԶԶ-ի մէջ !?!?!

Առանց որեւէ ռազմական գործողութեան, առանց որեւէ արեւմտեան ռազմական ուժի ներկայութեան ԶԶի մէջ, Փաշինյանը մը միայն, իր այդ հոտած հօտովը, այդտեղ, տեւաբար կը չափալախէ կոր՝ Փութին կոչեցեալին:

Մինչ մեզմէ որքան հայէ՛ր, որքան տարիներ, մեր յոյսերը դրած էինք՝ սոյն Ռուսաստանի վրայ... Եւ բացառապէս այդ պատճառով ալ կը հանդուրժէինք Զոչարյանները, մոչարյանները... Նաեւ հաւատալով իրենց ըսածներուն...

Ամբողջ ԶԶ բանակը, որ Ռուսաստանին կապուած ու ենթարկուած էր, ըստ էութեան՝ ռուսական բանակի միաւոր մըն էր, ծունկի եկաւ՝ Փաշինյանի մը առջեւ...

Մինչ Զոչարյան-մոչարյաններն ալ, արդէն տարիներէ ի վեր չեն կրնար կոր որեւէ բան ընել նշեալ պօզոյին դէմ, եւ իրենք ալ, որեւէ պահի, կրնան հասնիլ կամ վերադառնալ՝ բանտ:

Ուալլա արաւօ, Փաշինյան: Մալածե՛ց:

Դուք իրօք ինձանից շատ աւելի լաւ ես հասկացել քո ժողովուրդը, եւ հիմա քու ձեռքդ անցած՝ այդ կարծեցեալ, իբրեւ թէ երկիրը:

Հաճիս, նոյն թափով, շարունակէ զանոնք կառաւարել եւ ղեկավարել: Մինչեւ ծայր...

Մ. Հայդուկ Շամլեան

Յ.Գ. Ձերբակալուած այդ բարձրաստիճան սպային դէմ ներկայացուած մեղադրանքները, ես հակում ունիմ՝ հաւատալու...

See Translation



13 shares



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 11, 2024 · 🌐



ուրեմն, հիմա ալ, ական, «պրայմերիզ» բառը յօրինեցին...

հա, հա... «պրայմերիզ»...

երեւակայեցէք որ կան - մի քանի - մարդիկ որոնք Սփիւռքէն շալկուեցան եւ ՀՀ գացին, որպէսզի իրենց զաւակներուն գիտցած հայերէնը պահպանեն...

պրայմերիզ !!

Ե՛սնի՜ primaries... primary elections...

չէ՞ որ իրենք Gorges Washingtonի աջ սրունքէն եւ Jeffersօին ձախ տաշախէն իջած են, հիմա ուրեմն իրենք ալ՝ primaries ունին... ինչպէս որ ԱՄՆ նախագահութեան թեկնածուներու պարագային...

ական, չէ՞ք կրնար պարզապէս ըսել՝ «թեկնածուի ընտրութիւն»

կամ, եթէ իլլէ տէ մէկ բառով կ'ուզէք ըսել, քանի որ շատ cool էք, արդիական եւ յառաջադէմ, եթէ բան մը պիտի յօրինէք, go with «թեկնածընտրութիւններ»...

բայց չէ՛

պրայմերի՛զ

ի դէպ, Animal Farm գիրքը - որ հոյակապ կերպով կը յարմարի այդ կարծեցեալ երկրի ժամանակակից պատմութեան - , փոխանակ պարզապէս թարգմանելու՝ «Անասուններու Ազարակ», իրենց մօտ վերնագրած են... «Անասնաֆերմա» !

մասնաւոր ընես նէ, չես կրնար... յատուկ ձիրք է...

Հայրուկ Շամլեան

See Translation



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post

X



Blog H shared a memory.

January 6 · 🌐

...

Ուրեմն, ստորեւ՝ 5 տարի առաջուայ գրառում մը: Արցախի պատերազմէն ամիսներ առաջ: Սակայն դէպքերի ընթացքը, դեռ աւելի վատ հանդիսացաւ:

Արդարեւ, թէ՛ ազգային ծիւերը լման թաղուեցան, թէ՛ տնտեսութիւնը դեռ աւելի փտեցաւ, եւ մնացեալ ամէն բան՝ անկումի ենթարկուեցաւ: Հիմնականօրէն, անդառնալի կերպով...

Այսինքն, կարելի չէ նոյնիսկ «միախարուիլ», ըսելով որ՝ դեհ, Արցախը եւ այսքան կեանքեր կորսնցուցինք, շատ ափսոս, բայց գոնէ խաղաղութիւն գոյացաւ, տնտեսական-ընկերային վիճակը բարելաւուեցաւ, լուսաւոր ապագայի իսկական յոյսեր կան, ՀՀի մէջ: Չէ, այդքան կորուստներով, ոչ իսկ՝ այդ միախարանքի կարելիութիւնը:

Աշխարհի մէջ միայն հայերը ունին կարողութիւնը՝ այս ձեւով եւ այս աստիճան ձախողելու: Բացառիկ ձիրք կ'ուզէ, ուալլա...

See Translation



5 Years Ago
See your memories





Blog H

January 6, 2020 · 🌐

Մայիս 2018-էն ի վեր Հայաստանի մէջ տեղի ունեցող ողբերգական խեղկատակութեան ընդդիմադիրներն ու դիմադրողները յաճախ կ'ընդգծեն այն արդէն ակնյայտ իրողութիւնը թէ, տնտեսական ոլորտում, խնդրոյ առարկայ իրադարձութիւնները չտուին խոստացուած կամ ակնկալուած արդիւնքները, այլ նոյնիսկ հակառակ նշաններ կան այդ ուղղութեամբ:

Սակայն ասիկա էական նիւթ մը չէ:

Կարելի է նոյնիսկ ասել թէ տեղի ունեցած եւ տակաւին ընթացիկ իրադարձութիւնների պատշաճ, յստակատես վերլուծման մէջ՝ տնտեսական ազդակը բնաւ կարելոր չէ: Աւելին՝ այդ ոլորտում որեւէ նշանակալից առաջընթաց, թերեւս բաղձալի ալ չէ...

Արդարեւ, Հայաստանի այժմու վիճակին խորապէս բացասական, վնասակար եւ վտանգաւոր ճիւղաւորումները կը վերաբերին ոչ թէ տնտեսական նիւթերու, այլ հոգեկան, հոգեւորական, գաղափարական խնդիրներու, եւ այդ՝ ծայրագոյն, գոյութենական մակարդակի մը վրայ: Այդտեղ, տնտեսական մտահոգութիւնները, աննշան են: Կամ ել, հակառակ ուղղութեամբ, կը վերաբերին՝ տնտեսութեան թեական... աճին:

Այլ կերպով ներկայացնենք միտքը՝ այսինքն, ի՞նչ, եթէ նոր վարչակարգը յաջողէր կամ դեռ յաջողի տնտեսական արտակարգ զարգացում արտադրել Հայաստանի համար, մնացեալը՝ ոչի՞նչ...

Այս տեսանկիւնէն, նախընտրելի է ուրեմն որ Հայաստանի տնտեսական վիճակը չբարելաւուի:

Քանի որ, իրօք կան հայեր, որոնց համար ոչ մի խնդիր չէ որ «Հայաստան» կոչուած երկրի մը բնակիչները զրկուած լինեն հայու ազգային տարրական իսկ ինքնութենէ, հաւաքական ինքնասպանութեամբ՝ ուրանան հայոց էական հաւատքը (զորս, ի տարբերութիւն շատ մը այլ ազգերու, մեր պարագային, ուղղակի եւ բառացիօրէն՝ իսկական Փրկութիւն հանդիսած է), ժխտեն ու ծաղրեն հայոց նախնական նուազագոյն արժէքները, մի խօսքով, հայկական հողի վրայ դառնան օտար, «Հայաստան»ի մէջ՝ ոչ-հայ, միայն թէ՛ նիւթական գետնի վրայ ապրին հանգիստ, վայելեն իրենց անհատական հաճոյքներն ու անձնական բարօրութիւնը:

Այս իրականութեան լոյսին տակ, այսինքն, հնարաւոր է տառացիօրէն գնել հայու ազգային էութիւնը, Հայաստանի մէջ. փողի դիմաց՝ անեացնել հայ ազգը, իր հողին վրայ:

Ուրեմն, օտար որեւէ կառավարութիւն որ ունի բաւարար միջոցներ, երբ որ ուզէ, կարող է արուեստական կերպով իսկ բարելաւել Հայաստանի տնտեսութիւնը, որպէսզի վերջապէս իր լրումին հասցնէ Մեծ Եղեռնը:

Վերել պարզուած տրամաբանութեան հիման վրայ, այս հանգրուանին, նախընտրելի է ուրեմն որ Հայաստանի տնտեսութիւնը շարունակուի մնալ վատ, եթէ դեռ աւելի չվատթարանայ:

Քանզի «տնտեսական թռիչքը», երբ որ տեղի կ'ունենայ ազգային ինքնութեան քանդումի գործընթացին զուգահեռ, կը կատարուի այդ էական քայքայումի հաշւոյն, դա փաստօրէն թռիչք չէ, այլ գահավիժող անկում՝ ունայնութեան Անդունդին մէջ:

Հայաստանը բնականաբար կը զարգանայ ու կը վերականգնի, բառին այլազան - ներառեալ տնտեսական - իմաստներով, երբ որ իր անունին արժանի երկիր կը դառնայ, ազգային առումով:

Եթէ ոչ, կը մնայ ու դեռ կը շարունակէ խրիլ իր ճահիճին մէջ:

Հայդուկ Շամլեան
06.01.2020

See Translation

Like

Comment



Write a comment...



Blog H's Post



Blog H

December 7, 2024 · 🌐



Պագարընիը շատ յստակ է:

Ամեն մեկ քայլ որ Սուրիոյ - արդէն նախկին... - իշխանութիւնը կը կորսնցնէ իր պաշտօնական տարածքէն, նոյն չափի քայլ մը Ուքրանիոյ տարածքէն կը դառնայ վերջնականապէս ռուսական հող:

Միայն թէ, տակաւին յստակ չէ եթէ թոյլ պիտի տան որ Պաշար-Էլ-Ասատը պիտի կարենայ իր մորթը փրկել: Մինչ Չելենսկին, գոնէ ողջ կը պահեն:

Իսկ շուտով կը հասնի պահը, ուղղակի եւ վերջնական կերպով անեացնելու՝ Իրանի վարչակարգը:

Մ. Զայրուկ Շամլեան

Յ.Գ. Այս ամենէն շատ պիտի օգտուի ծննդեան հայրենիքս, Լիբանանը: ԱՄՆի եւ Իսրայէլի հովանաւորութեամբ, դարձեալ կեանք պիտի առնէ այդ հոյակապ երկիրը:

[See Translation](#)



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H shared a memory.
January 15 at 8:30 AM · 🌐



Պլաֆծի, շարլաթան, ճախող աճաքարար Փուլթինը, փաստօրէն անգօր ու անկարող է նոյնիսկ Ռուբեն Վարդանյանը թրքական բանտէն դուրս հանելու: Ուրեմն, այդ ուղղութեամբ եւս պագարընիը կը շարունակուի, մինչեւ որ, այս առիթով ալ, Թուրքիան ինչ որ կ'ուզէ՝ ստանայ՝ Ռուսաստանէն:

See Translation



2 Years Ago
See your memories



Blog H
January 15, 2023 · 🌐

Եթէ իրական ներքաղաքական showdown (Mexican standoff?) մը կայ Արցախի մէջ, ես իսկապէս, չկրցայ ստոյգ կերպով հասկնալ թէ՛ ով, ի՞նչ է ուզում:

Սակայն տիրապետող վարկածը այն է որ, այդ սուրճ-խմողը արեւմտապաշտ Փաշինյանին զավալը չըրախն է, մինչ Ռուբեն Վարդանյանը՝ Ռուսաստանի մարդը: Եւ հետեւաբար, ամէն մէկը կ'ուզէ կոր միւսէն ձերբագատուիլ:

ամէն դէպքում, եթէ ինչ-որ յոյս մը պիտի կապէինք մէկու մը, պիտի նախընտրէի որ Ռուբեն Վարդանյանէն աւելի տպաւորիչ մէկը ըլլար: Բայց լաւ... we take what we can... Ոչինչէն լաւ է...

Մէկ բան կ'ուզեմ յիշեցնել սակայն, եւ կը կարծեմ որ յատկանշական տուեալ մըն է՝ 2018ի գարնան, Ռուբեն Վարդանյանը, գրեթէ բառ առ բառ բացատրած էր որ, եթէ Երեւանի այդ յեղափոխութիւնը յաջողի, ապա, թէ՛ Արցախը թէ՛ Հայաստանը, հասնելու ենք այժմու աղետալի վիճակին... կը խօսէր երիտասարդներու հաւաքի մը, եւ այն ժամանակ նաեւ հիւանդ էր... երանի թէ կարենամ գտնել իր այդ ելոյթը:

Հայդուկ Շամլեան

See Translation



Like



Comment



Write a comment...





×



November 28, 2024 · 🌐



Ռոբերտ Զոչարյանը դարձեալ չախխալի պէս վերադարձաւ դատարան, ուր, չախխալի պէս նստած, դարձեալ կը դատուի կոր:

Որքան երկար ժամանակ, ես ալ կը կարծէի թէ այս մարդը զօրեղ եւ ուժեղ, կարողութիւններով լեցուն մէկն էր: cf. առաջին քովերթ...

Մեջտեղ ելաւ որ, ինքն ալ՝ պլըֆնի մը էր միայն: Ձեռքը երկու հատ երկուքսոց բռնած: Շարլաթան մը: Թիջուած թուղթ վագր մը:

Եւ դեռ կան հայեր, որոնք կ'ուզեն կոր որ ասիկա՝ վերադառնայ իշխանութեան... Ներառեալ ԶԶի զաւալլը դաշնակցականները...

Խնդիրը այն է որ իր տերն ալ, նոյնպէս դուրս եկաւ... Փութին կոչեցեալ աճապարարը... որուն իրականութիւնը նախ պարզուեցաւ Արցախի վերջին պատերազմին, ապա, ան լրիւ ճիւղերը պիտի ուտէր Ուկրանիոյ մէջ, եթէ Դրամփը չընտրուէր ԱՄՆ նախագահ:

Այսինքն, հիմա ԱՄՆ-ն է որ պիտի փրկե՝ Ռուսաստանը !

Հայդուկ Շամլեան

See Translation



2 comments

Like

■ Comment

Share

All comments 

Blog H

. 24 Դեկտեմբեր 2018

Ռոբերտ Բոչարյան / պաշտպանողական

<https://haytougchamlan.blog/ռոբերտ-քոչարյան-պաշտպանողական-2018/>

. 15 Մարտ 2019

Ռոբերտ Զոչարյան՝ բանտարկուած Ընդդիմութիւն, քաղաքական պատանդ,
քառութեան նոխագ


<https://haytougchamlan.blog/ռոբերտ-քոչարյան-բանտարկուհած-ընդդիմ/>



HAYTOUGCHAMLIAN.HOME.BLOG

Ռոբերտ Բոչարյան / պաշտպանողական (2018)

10w Like Reply See translation



Բնավ լաած կա՞ս որ պոռնկատանը կոյսեր են աշխատում: Չախխալիստան կոչվող երկրում ել պարզ է որ միայն չախխալներ լինեն:

Ես երկրում համատարած տաշ..իսի սով կայ:

Վեց տարվա մեջ նմուշի համար մի հատ կոկոսավորի հանդիպեցի՞ր:

Կոտոշապոր ուղաժիդ չափ:

10w Like Reply See translation





X



November 29, 2024 · 🌐



* * *

* * *

Մ. Հայդուկ Շամլեան

Մինչ հիմա, եթե այս մնացածը լման «թողնեն» իսկ Անդրկովկասի հայերուն, արդեն ոչինչ է: Ձեւական բան մըն է, հազիւ: Եւ նորէն, այդ իսկ՝ ժամանակաւոր:

See Translation



Like



Comment



Share



Write a comment...





X

November 30, 2024 · 

* * *

* * *

* * *

Մ. Հայդուկ Շամլեան

4 comments 1 share

Like

■ Comment

Share

All comments



 Author

Blog H

9w Like Reply See translation

2



Hripsime Kaloyan

9w Like Reply See translation



 Author

Blog H

9w Like Reply See translation Edited



9w Like Reply See translation



Write a comment...





X



November 23, 2024 · 🌐



Արձագանգս՝

Մինչ այդ սակայն, ահա արդեն այդ ուղղութեամբ հակազդեցութիւն մը՝

ՀՀ Անկախության Հռչակագրի դեմ ամենաառաջին պայքար սկսողը, Առաջին Նախագահն է:

Մինչդեռ, այդ հռչակագիրը ստորագրողը... ի՞նքն էր ?

Խի՞, զայն ստորագրեց: Միմիայն որպեսզի նախագահ դառնայ, հա՞...

* * *

Փաշինյանը, LSՊի գաղափարաբանական որդին է, ժառանգորդն է:

Բայց ինք, իր այդ արարիչէն աւելի լաւ է, քանի որ՝ անկեղծ է:

Ձեր սիրած ու յարգած, սոյն Առաջին Նախագահի՝ ԶՅԻ հիմնադիր ԶՅՈՆ, ԶՅԻ մէջ հալածանքներու ենթարկեց, ապօրինի յայտարարեց, եւ հակադրուեցաւ իր իսկ ստորագրած Անկախութեան Զոչակագրի Էական հիմունքներուն:

Թե որ այդպես չաներ, ապա, «ղարաբաղցիների քլան»ը երեք չեր տիրանար ձեր այդ զգուելի դարձած Երեւանին: Եւ ուրեմն հիմա, գոնէ նշո՛ղ մը Հայոց ազգային գիտակցութիւն, ազգային տարրական ըմբռնողութիւն մը գոյութիւն կ'ունենար, մինչդեռ «Հայ»աստան անունով ձեր այդ իբրեւ թէ երկրին մէջ:

Ձեր նմանները, սկսեալ ձեր վերոնշեալ Տիրոջմէ՝ կոյրերի արքայութեան մէջ, միականիներն էք: Բայց ձեր մէկ աչքն ալ լաւ չի գործում, քանզի չտեսաք ու դեռ չէք տեսնում որ աշխարհի համայն Հայութիւնը չէ, որ կոյր է:

Մ. Հայդուկ Շամլեան

See Translation



2 shares



Like



Comment



Share



Write a comment...



X



November 25, 2024 · 🌐



See Translation



Like

■ Comment

Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

January 2 · 🌐



Ցաւը ուրանալով չէ, որ պիտի շարունակենք ապրիլ:

Ցաւը հերքելով, ժխտելով, անտեսելով՝ վերսկսիլ կեանքը վայելել, ոնց որ որեւէ բան չի եղել, դա բնական չէ: Անզգամութեան աստիճան մըն է, ուր վերջ կը գտնէ՝ մարդկայնութիւնը:

Պիտի ապրինք, այո: Պիտի վերսկսինք, շարունակենք ապրիլ:

Բացառիկ, իւրայատուկ պահերու, նաեւ որոշ ուրախութիւն մըն ալ կրնանք զգալ...

Սակայն միշտ ու ընդմիշտ, այդ ցաւին հետ:

Մեր խնդուքին, մեր ծիծաղներուն, մեր ամենաթունդ քահ-քահին մէջ իսկ, պիտի ըլլայ՝ այդ ցաւը:

Այդ ցաւը անբաժան մասնիկն մըն է մեր մնացեալ կեանքին:

Այդ ցաւին հետ է, այդ ցաւին շնորհի՛ւ է, որ այս աշխարհէն մեկնած մեր մօտիկ սիրելիները կը մնան մեր հետ, այստեղ, մինչեւ որ մենք ալ միանանք իրենց:

Այս ցաւը պիտի չխորտակէ մեզ: Ժամանակի ընթացքին, հանգրուաններով, պիտի յաղթենք անոր:

Սակայն անկարելի է որ վերադառնանք այդ նախկին կեանքին, ուր չկար այդ ցաւը:

Եթէ մարդ ենք:

Հայդուկ Շամլեան

[See Translation](#)



 Like

 Comment

 Share



Write a comment...





X



November 22, 2024 · 🌐



Իր ոտքերը սաղ լիզելէ ետք, հիմա անոնք թող լզեն՝ իր կօշիկներուն ներքանը, անոնց տակի՝ գետինը:

(Իսկ այդ մեկ, բացառիկ աւանսակը, որ «դիմադրելու» պէս բաներ մը կ'ընէ կոր, կը մաղթեմ որ ան շարունակէ իր այդ ընթացքը, որպէսզի քիչ մըն ալ՝ բանտ նստի:)

Մ. Հայդուկ Շամլեան

See Translation



Like



Comment



Share



Write a comment...





Blog H's Post



Blog H

December 9, 2024 · 🌐



փիփի-յոտ դրօշ...

ռուսական կայսրության եւ թրքական կայսրության դէմ, «զէնքը ձեռին ոտքի կանգնեցանք», ի սեր Յայ Ազգին եւ հայ ժողովուրդին

այդ երկու կայսրութիւններուն դէմ, միաժամանակ

եւ հիմա, ահա, Փաշինյանի մը վարչակարգին առջեւը, բարի-բարի սստած են, խորհրդարանի իրենց աթոռներուն վրայ... որպէսզի գոնէ չտեսնենք որ իրենց վախէն, իրենց տակերը թրջած են... եթէ ոչ աւելին...

փֆֆֆֆ...

Հայրուկ Շամլեան

Յ.Գ. «Արիւնստ Դրօշ»ի յատուկ պար մը, զորս գոնէ առանձնաշնորհը ունեցայ կատարելու՝ պահ մը ազատագրուած Հայոց Արցախի հողին վրայ... Շուշի, 2008 թ.՝

<https://www.facebook.com/AramManoukianJampar/videos/1281835586056024>

See Translation



0:03 / 1:10



Aram Manoukian Summer Camp - Shoushi

August 13, 2023 · ⚙

Շուշի, 2008 թ.

(. տեսանկյուն վերջին տողերը...՝

« չմտա՛նք հայեր, թուրքի լուծին տակ հերիք է Հայուն այսքան համբերել... »

. իսկ աւելի սկիզբըները՝

«կեցցէ՛ Հայաստան, եւ Ազատութիւն...»

. եւ մինչեւ առաւօտ, այսպէս, երգեցինք ու պարեցինք մեր Շուշիի ազատագրուած, սուրբ հողին վրայ...

Նորէ՛ն կը պարենք)

See Translation



Like



Comment



Share



Write a comment...



Blog H's Post

×



Blog H

December 16, 2024 · 🌐

Զօվիտի նկւթով, հիմա իրենք գիրենք բարձր խելացութեան տեր կը համարեն ոմանք, որոնք համաճարակի ընթացքին քստմնելի, աններելի վարքագիծ ցուցաբերեցին:

Ձեռնոցները, դիմակները, «ընկերային հեռաւորութիւնը», Օրէնքի ուժով տան մէջ բառացիօրէն բանտարկուիլը, եւայլն.... այո, այժմ հաստատուած է որ այս բոլորը, զուր ու անիմաստ բաներ էին:

Նաեւ յատակ է որ պատուաստները շա՛տ հեռու էին ունենալէ այն ազդեցութիւնը, որ իբրեւ թէ պիտի ունենային (ես երեք յաջորդական պատուաստներ ստացայ, եւ այնուհանդերձ երկու անգամ քովիտ ունեցայ, թեսթաւորումով ստուգուած... իսկ թէ որ, շնորհիւ պատուաստին ակելի թեթեւ կը լինի հիւանդութիւնը, դա արդէն լրիւ անհեթեթութիւն է.. ինչպէ՞ս կը փաստուի, այդ... պատուաստները ետ դուրս կը հանես մէջէդ, ապա կը ստանաս քովիտը, եւ կը նայիս թէ այդ պարագային ի՞նչ էր լինելու վիճակդ...)

Սակայն այս ամէնը, հիմա, ՅԵՂԱՐԱՐՁ ԱԿՆԱՐԿՈՎ է որ կը դիտենք: Hindsight is 20/20 !!

Այդ օրերուն, ինչպէ՞ս կարելի էր չհետեւիլ կանոններուն, եւ պատուաստը մերժել...

Կարելի՞ էր այդ ռի՛սկը առնել, երբ որ, օրինակի համար, կենսական շփումի մէջ էիր՝ տարեց ու հիւանդ ծնողներիդ հետ... իրենց եւ դուրսի միջեւ, միակ կապն էիր...

To err on the side of caution ըսուած բան մը կայ, որ ծայրագոյն չափով ի գօրու է, երբ որ խօսքը՝ մահ պատճառելու մասին է:

Երբ որ մարդ բան չէր գիտեր, ի՞նչ պիտի ընէինք, ուրիշին կեանքին հետ խումմա՞ր խաղայինք !?

Առողջներն ու զօրեղները հանգիստ իրենց կեանքերը պիտի վայելէին, մինչ տկարներն ու հիւանդներն ալ, դեհ, վնաս չունի՛... թող անոնք մեռնին, հա՛... sélection naturelle, ակամ !

Չէ... անոնք որոնք, համաճարակի ընթացքին, մերժեցին վերոնշեալ բոլոր կանոնները եւ պատուաստը, հիմա իրենց գիրենք թող չհամարեն շա՛տ խելացի անձեր...

Այդ ժամանակ, ոչ մի բան էլ հաստատ չէր, եւ հետեւաբար իրենց ըրածը՝ չափազանց անպատասխանատու բան մըն էր, անմարդկային անզգամութիւն էր, ծայրագոյն անձնասիրութիւն էր, անհատամոլութիւն էր:

Իսկ իրենցմէ ոմանց հիւանդութիւնը՝ յիմարագոյն դաւադրապաշտութիւնն է, զորս վստահաբար ակելի անդարմանելի է, քան թէ քովիտը:

Մ. Զայրուկ Շամլեան

See Translation



5 comments

- Like
- Comment
- Share

All comments

- 

Hripsime Kaloyan

Ես ալ քո նման 3 պատվաստ ստացա, (Չինական անունը չեմ հիշեր կոր) մի անգամ վարակվեցի առաջին պատվաստից հետո: Ընտանիքի անդամներիցս վարակվեցի, շատ թեթեվ տարի, ի տարբերություն կնոջս որ շատ լուրջ թոքաբորբ ունեցավ, հակառակ որ ոչ կը խմէ ոչ ալ կը ծխէ, առողջ կապ... [See more](#)

7w

Like

Reply

See translation


- 

Author

Blog H

Hripsime Kaloyan լաւագոյն, ամենաազդու, թերեւս նոյնիսկ՝ միակ ձեւը, immune ըլլալու այս փիս վիրուսին դեմ, անկէ վարակուիլն է. ախտանշանները կրնան բաւական անախորժ ըլլալ՝ տաքութիւն, դող, մարմնային ցաւեր, զօրաւոր հազ... այսինքն, ինչպէս որ ծանր կրիփ մը... Ես եր... [See more](#)

7w

Like

Reply

See translation


- 

Author

Blog H

Hripsime Kaloyan բայց միտքս բան մը բերիր, ակամ... կեցիր երթամ արխիւներս խառնեմ... եթէ գտնեմ, կը ինդանք...

7w

Like

Reply

See translation


- 

Author

Blog H

Hripsime Kaloyan գտայ ուալլա... պիտի հրապարակեմ, որպէս անջատ գրառում...

7w

Like

Reply

See translation


- 

Hripsime Kaloyan

Blog H եալլա սպասում եմ

7w

Like

Reply

See translation





Write a comment...



